

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԾՈՎՈՒԹԸ ԿԻՊՐՈՍԻ ԱՓԵՐՈՒՆ ՄՕՏ ԽՈՒՉԱՐԿԵՑ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆԱԷՐ

ՊԵՐԼԻՆ, 29 (ՌՅԹԸԸ).- Ամերիկեան ծովուծր կիպրոսի փերուս մօտ խուկարկեց սուրիական երկու նաւեր, որոնց մէջ սակայն ապօրինի ունիւն գտաւ, յայտնեց ծովուծի բանբեր մը:

Միացեալ Նահանգներու Վեցերորդ Նաւատրմիդի անունով իրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ նաւերը կասկած արթնցնող շարժումներ կատարած են՝ պատճառ դառնալով, որ ամերիկեան ուժեր խուկարկութիւններ կատարեն: Յայտարարութիւնը կ'աւելցնէր, որ շարժումները ի վեր նաւերը իսկողութեան տակ էին: Յայտարարութիւնը կը նշէր նաեւ, որ այսպիսի միջոցառումներու նպատակն է արգիլել որեւէ մէկուն Միջերկրական օգտագործել ահաբեկչական նպատակներու համար:

Սուրիոյ փոխադրամիջոցներու նախարարութիւնը մերժեց մեկնաբանութիւն կատարել միջադէպին մասին:

ՌՈՒՍԻՈՅ ՏՈՒՄԱՅԻ ՆԱԽԱԳԱԸ ԿԵՆԱՏԻ ՍԵԼԵՉՆԻԵԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Ռուսիոյ Տուժմայի (խորհրդարան) նախագահ Կենատի Սելեչնիև, միջին արեւելեան իր շրջապատոյտի ծիրէն ներս, նախանցեալ գիշեր երեսփոխանական պատ- լիրակութեամբ ժամանեց Պէյրութ, ուր երէկ տեսակցութիւններ ունեցաւ նախագահ զօր. էմիլ Լահուտի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ, ինչպէս նաեւ ներկայ գտնուեցաւ խորհրդարանի լիագումար մէկ նիստին:

Նախագահ Լահուտ Սելեչնիևի հետ հանդիպումին ընթացքին յոյս յայտնեց, որ Ռուսիա դերակատար կ'ըլլայ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացի վերակենդանացման աշխատանքներուն մէջ, մանաւանդ որ ան այս գործընթացը հովանաւորներէն մէկն է, Միացեալ Նահանգներու կողմէն:

Լիբանան բարձր կը գնահատէ իր կեցութեան ներքին հանգչի Ռուսիոյ գորակցութիւնը եւ կը սպասէ նախագահ Վլատիմիր թուրքի յայցելութեան, թուրքի տալու համար ե կու երկիրներուն յաւելլել զործակցութեան, ըսաւ ան:

Նախագահը վերահաս-

տատեց միջազգային գործադրութեան գծով Լիբանանի սկզբունքային կեցողութեանը, դիտել տալով որ վերջին տարիներուն տրուած միջազգային որոշումները ամբողջութեամբ չեն գործադրուած եւ իսրայէլ խափանած է խաղաղութեան գործընթացը վերակենդանացնելու բոլոր փորձերը:

Նախագահ Լահուտ ընդգծեց պաղեստինցի գաղթականներու տուժ- հարձի, սուրիական կողմից եւ Մազարէի Շըպայի գծով արարական իրաւունքները:

Ռուս պաշտօնատարը յայտնեց, որ իր այցելութեան նպատակն է ծանօթանալ Լիբանանի եւ շրջանային իրավիճակին, եւ իրանացի խորհրդարանականներուն հետ որ ան այս գործընթացը հովանաւորներէն մէկն է, Միացեալ Նահանգներու կողմէն:

Նախագահ Լահուտ Սելեչնիևի պարզեւտու- ընց բարձրաստիճան շքանշանով մը:

Ռուս պաշտօնատարը նաեւ այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի, ապա

իրեն ընկերացող երեսփո- խաններուն հետ ներկայ գտնուեցաւ լիբանանեան խորհրդարանի լիագումար նիստին (առաւօտեան) մէկ մասին:

խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի լիագումարի ժողովարարէն ներս դիմաւորեց իր ռուս պաշտօնակիցը եւ հաստատեց, որ Ռուսիա Լիբանանի այն բարեկամն է, որ հասկացողութիւն ցուցաբերած է Միջին Արեւելքի հարցին, պաղեստինեան դատին եւ միջազգային ահաբեկչութեան գծով, եւ Լիբանանի նման իրարմէ յստա- կօրէն կը գնահատէ ահաբեկչութիւնն ու դիմադրութիւնը:

Սելեչնիև, իր կարգին, ողջունեց լիբանանցի երեսփոխանները, նկատել տալով, որ ժողովին անոնց կը միանան տարբեր ռուս երեսփոխաններ, որոնք օտար չեն զգար: «Տուժման աւարտեց 2002ի կետական պիւտճէի նախագծին քննարկումը, եւ դուք այժմ այդ գործընթացին մէջ էք: ձեզի կը մաղթենք յաջողութիւն, ինչպէս նաեւ կը յուսանք մեր երկու երկիրներուն միջեւ գործակցութեան ամրապնդումը», ըսաւ ան:

Սելեչնիև, իր կարգին, ողջունեց լիբանանցի երեսփոխանները, նկատել տալով, որ ժողովին անոնց կը միանան տարբեր ռուս երեսփոխաններ, որոնք օտար չեն զգար: «Տուժման աւարտեց 2002ի կետական պիւտճէի նախագծին քննարկումը, եւ դուք այժմ այդ գործընթացին մէջ էք: ձեզի կը մաղթենք յաջողութիւն, ինչպէս նաեւ կը յուսանք մեր երկու երկիրներուն միջեւ գործակցութեան ամրապնդումը», ըսաւ ան:

ՊԱՂԵՍՏԻՆՑԻՔ ԵՒ ԱՐԱՅԱԹ ԿՈՐՍՆՅՈՒՑԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԱՌԻԹԸ

ԿՐԸՄ ՈՒԱՇԻԿՎՈՐՆ



Իսրայէլեան ուժեր երէկ անգամ մը եւս պաղեստինեան գիւղ մը ներխուժեցին Այսրյորդանանի մէջ, ուր երեք ծայրայեղականներ ձերբակալեցին: Մինչ այդ, իսրայէլի հանրային ապահովութեան նախարարը կը պատրաստուէր ներկայացնելու ծրագիր մը, որուն նպատակն է թափ տալ երոսադէմի եւ անոր շրջակայքի ապահովութեան:

Իսրայէլեան բանակը նաեւ ըմբոստութիւն մը կը դիմագրաւէ իր շարքերուն մէջ, ուր պահեստի աւելի քան յիսուն սպաներ մերժած են ենթակուելու կազայի ու Այսրյորդանանի մէջ գործելու հրահանգին: Պահեստի սպաներուն որոշումը բանաժեզ մը պատճառով է՝ հարցականի տակ առնելով բանակին ընթացքն ու միջոցառումները՝ 16 ամիսէ ի վեր ծայր տուած պաղեստինեան ըմբոստութեան հանդէպ:

Իսրայէլեան ուժերը, ընկերակցութեամբ հրասայ- լերու, երէկ արեւածագէն առաջ ներխուժեցին Իր- թաս գիւղը, Բեթղէհէմի մօտ, ուր զինեալներ կրակ բացին իրենց վրայ: Բախումին ընթացքին վիրաւոր- ւեցան վեց պաղեստինցիներ, որոնց կարգին են երկու կիներ, յայտնեցին պաղեստինեան ապահովութեան ազդիւրները:

Բանակը յայտնեց, որ իսրայէլեան ժիհատ շար- ժումին պատասխանատու մը եւ երկու այլ իսրայեա- կաններ ձերբակալեց իրթասի մէջ: Բանակը կ'ըսէ, որ ձերբակալուածները մասնակցած են իսրայէլի զէմ ահաբեկչական գործողութիւններու:

ԱՐԱՅԱԹ ԿՈՐՍՆՅՈՒՑԻ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹԸ

Միացեալ Նահանգներ կ'ըսեն, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆատ կորսն- Շարք՝ էջ 3

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

ՀԱՅՐԵՆԻ ՉԱՒԱԽՔ

«Ազդակ» ի յատուկ հրատարակութիւն: 496 էջ:

- Ստանալու համար դիմել գրախանութ- ցեր՝ Ըմազգային, Նարեկացի, Ոսկեղար, Ուրֆալեան եւ Կոմիտաս:
- Բովանդակութիւնը տեսնել էջ 2:

Գին՝ 15.000 Լ.Ո.

ՀԱՅԱՍՏԱՆ ԴՐԱԿԱՆ ԿԸ ՆԿԱՍԷ ԱԼԻԵԻ ՍՈՍԿՈՒԱ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

ԿՐԸՄ ՎԱՐՈՒՆ ՕՍԿԱՆԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան Յունուար 28ին, լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին անդրադարձաւ Ազգայն- ճանի նախագահ Հայտար Ալիեի Մոսկուա կատարած պաշտօնական այցելութեան: Նախարարը յայտնեց, որ նման նախաձեռնութիւններ դրական ազդեցութիւն կ'ունենան Հարաւային Կովկասի իրավիճակին վրայ: Օսկանեան ըսաւ, որ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը նպատակաւորաբար չէ օգտուելու շրջանի երկիրներուն միջեւ առկայ անհամաձայնութիւններէն, այլ կը միտի օժանդակել այդ անհամաձայնութիւններու վերացման: «Պաշտօնա- կան երեւանը դրական վերաբերմունք ունի շրջանին մէջ ընթացող զարգացումներուն նկատմամբ, օրի- նակ՝ ռուս-թրքական եւ ռուս-ազրպէյճանական համագործակցութեան վերաբերեալ, այն առումով, որ դրացի երկիրներու միջեւ միջպետական կայուն յարաբերութիւնները ներդրում կ'ունենան ընդհանուր շրջանի կացութեան մէջ»:

Շարք՝ էջ 2

ՊՈՒՇ Կ'ԱՐԴԱՐԱՅՆԷ ԹԻԻ 907 ՅՕԴՈՒԱԾԸ ԱՌԿԱՍԵԼՈՒ ԻՐ ՈՐՈՇՈՒՄԸ

Միացեալ Նահանգներու նախագահ Ջորջ Պուշ Յունուար 25ին ժամանակաւորապէս առկախած էր Ազատութիւն Զօրակցութեան Օրէնքի թիւ 907 Յօդ- ւածը, որ 1992էն ի վեր կ'արգիլէր ամերիկեան ուղ- դակի օժանդակութիւններ տրամադրել Ազրպէյճանի կատարուած համար:

Այս որոշումին գծով Պուշ նամակ մը յղած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուելի, ուր յայտնած է, թէ նշեալ պատժամիջոցի կասեցումը «կը նպաստէ միջազգային ահաբեկչու- թեան դէմ դնելու Միացեալ Նահանգներու ջանքե- րուն»: Նախագահը հաւատարմացուցած է, որ թիւ 907 Յօդուածի առկայութեամբ «պիտի չազդէ Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ հակամարտութեան խաղաղ լուծման ջանքերուն, ինչպէս նաեւ պիտի չօգտագոր- ծուի Հայաստանի զէմ ուղղուած յարձակողական նպատակներու համար»:

Միւս կողմէ, Սպիտակ Տան Ազգային Անվտան- դութեան խորհուրդի բանբեր Շոն Մաքքորթաք յայտնեց, որ նախագահ Պուշ թիւ 907 Յօդուածը կասեցու- ցած է «ամերիկահայ համայնքին հետ այս հարցը ման- ասանորէն քննարկելէ ետք»: Ան շանդրադարձաւ Ազրպէյճանին տրամադրուելիք օժանդակութեան տեսակին եւ ժամանակացոյցին: Ըստ Մաքքորթաքի՝ ամե- րիկեան վարչակազմի այս որոշումը Միացեալ Նա- հանգներուն թոյլ կու տայ խորացնելու հակահար- բեկչական պայքարի ծիրէն ներս Ազրպէյճանի հետ համագործակցութիւնը: «Պուշի վարչակազմը նաեւ կը ծրագրէ խորացնել Հայաստանի հետ համագոր- ծակցութիւնը, անվտանգութեան հարցերու ծիրէն ներս», աւելցուց Մաքքորթաք:

907 ՅՕԴՈՒԱԾԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԲԱՂԱԲԱԿԱՆ ԱՐԺԷՔ ՈՒՆԻ

ԿՐԸՄ ԱԼԻԵ

Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիե վերջերս Մոսկուա կատարած իր այցելութեան ընթացքին, Պաղեստին օդակայանին մէջ լրագրողներու հետ ունե- ցած էր կարճ հանդիպում մը: Ալիե անդրադարձաւ լուրջ Միացեալ Նահանգներու կողմէ թիւ 907 Յօդուա- ծի առկայման, յայտնած է, թէ այդ որոշումը քաղա- քական արժէք ունի: «Նախապէս, Ազրպէյճան այդ պատժամիջոցի վերացման պէտք ունէր ստանալու համար տնտեսական օժանդակութիւն. այսօր տնտե- սական տեսակէտէն Ազրպէյճան պէտք չունի անոր: Միացեալ Նահանգներու նախագահին որոշումը ունի միայն քաղաքական արժէք», յայտնած է Ալիե:

Միւս կողմէ, Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիե երէկ ընդունեց Վրաստանի խորհրդարանի նախա- գահ Նինա Պուրճանաձէն: Հանդիպումին ընթացքին Ալիե յայտնեց, որ շրջանին մէջ առկայ հակամար- տութիւններու անլոյծ մնալը կովկասի զարգացման խոչընդոտող ամենապիտանող խնդիրն է: «Ռազմա- կան հակամարտութիւնները կը բարդացնեն իրավի- ճակը ինչպէս Ազրպէյճանին, նոյնպէս Վրաստանի մէջ», ըսաւ Ալիե, աւելցնելով, որ կարելի պիտի ըլլայ հասնիլ կայունութեան հաստատման, ինչ որ հիմք պիտի ստեղծէ շրջանի պետութիւններուն միջեւ հա- մագործակցութեան: Ալիե Ազրպէյճանի եւ Վրաս- տանի համագործակցութեան մակարդակը համարեց «յաւ»: Իր կարգին, Վրաստանի խորհրդարանի նա- խագահը յոյս յայտնեց, որ Ազրպէյճան եւ Վրաստան կը յաջողին գտնել «նոր մօտեցում», շրջանին մէջ տագնապներու լուծման առնչութեամբ:

ԱՐԱԲ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԸ ԲԱՅՈՒԵՑԱԻ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Արաբ ներքին գոր- ծոց նախարարներու խորհուրդի ժԹ. խորհրդաժողովը գու- մարուեցաւ երէկ, Պէյրութի «Ֆենիսիա» պանդոկին մէջ, հովա- նաւորութեամբ նա- խագահ զօր. Էմիլ Լա- հուտի: Ներկայ էին արաբական 17 երկիր- ներու ներքին գործոց նախարարները. բա- ցակայեցան Լիպիոյ, Պաղեստինի, Սո- մալիի, Ճիպուրիի եւ Քուվեյթի կողմից: Պուստիան կողմից գործոց նախարարները:

Բացման խօսքով հանդէս եկաւ խոր- հուրդի ընդհանուր քարտուղար Մոհա- մէտ Ալի Քուսա, հաս- տատելով միջարարա- կան զօրակցութիւնը ամրապնդելու անհր- րաժեշտութիւնը, ի խնդիր համաարաբա- կան գերագոյն շահե- րուն:

Խորհուրդի պա- տուոյ նախագահ Նա- յէֆ Պըն Ապտիլ Ալիյա Ալ Մէնու իշխանը կոչ ուղղեց արաբական երկիրներուն՝ խորհրդ- դակցելու եւ միացեալ կեցուածք եւ քայլեր առնելու, ի տես մի- ջապայտի ահաբեկ- չութեան դէմ պայքարի միջոցառումնե- րուն: Ան նաեւ հաստա- տեց անհրաժեշտու- թիւնը իրարմէ վանա- վանելու ահաբեկչու-

թիւնը եւ հողի ու պատիւի օրինական պաշտպանութիւնը: Բացման նիստին նախագահ Լահուտի խօսքը արտասանեց ժողովի նախագահ, ներքին գործոց նա- խարար Էլիաս Մըր: Ան վերահաստատեց, որ Լիբանան կը դա- տապարտէ ահաբեկ- չութիւնը, որուն դէմ պայքարած առաջին երկիրներէն մէկն էր ան, եւ այս պայքարին մէջ զոհուեցան լիբա- նանեան բանակի բազմաթիւ զինուոր- ներ:

«Այս խորհուրդն ալ, իր կարգին, 1997էն ի վեր ահաբեկչութեան դէմ պայքարի համա- արաբական ռազմա- վարութիւն որդեգրած է», աւելցուց ան:

Մըր հարց տուաւ, որ ի՞նչպէս կարելի է շրջանին մէջ խաղա- ղութիւն հաստատել, երբ Իսրայէլ ամենա- ծանր ահաբեկչու- թիւնը կը գործէ, ընդ- գծելով, որ առանց պա- տութեան՝ ապահովու- թիւն չկայ, ո՛չ ալ ապա- հովութիւն՝ առանց պաշտպանութեան:

«Պաղեստինցի գաղ- թականներու բնակե- ցումը մերժելու Լիբա- նանի իրաւունքը սա- կարկելի չէ, եւ այս գծով մեր կեցուածքը անպի- ջելի է», ըսաւ ան: Յետմիջօրէին փակ-

ւեցաւ առաջին նիս- տը, իսկ արաբ նախա- րարները երեկոյեան գումարուած երկրորդ նիստին՝ սկսան ժողովի օրակարգին վրայ տեղ գտած կէտերու քննարկումին: Ժողովը կը շարունակուի այսօր:

ԸՆԹՐԻՔ՝ ՊԱԱՊՏԱՅԻ ՄԷՋ

Հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտ Պապատայի պալատին մէջ ընթ- րիք մը սարքեց ի պա- տիւ արաբ ներքին գործոց նախարարնե- րուն: Ներկայ էին խորհրդարանի նա- խագահ Նեպիհ Պըր- րի, վարչապետ Ռա- ֆիք Հարիրի, նախա- րարներ, արաբ դես- պաններ եւ դիւանա- գէտներ, բարձրաս- տիճան զինուորա- կաններ, լիբանանցի եւ օտար անձնաւոր- րութիւններ եւ հիւրեր: Նախագահ Լա- հուտ արտասանեց խօսք մը, որուն մէջ բարի գալուտ մաղ- թեց արաբ դիւանա- գէտներուն եւ շնոր- հակալութիւն յայտնեց անոնց, որոնք իրենց խորհրդաժողովը կը գումարեն Պէյրութի մէջ, ինչ որ զօրակցու- թեան լաւագոյն օրի- նակ է Լիբանանի հանդէպ:

ԹՈՒՐԶԻԱ

ՔՐՏԵՐԵՆԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՀԱԳԻՆ ՄԵԼԱՆ ՀՈՍԵՑՆԵԼ

ԱՆԳԱՐԱ, 29 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ Ազգային Ապահովութեան խորհուրդը, ուր բարձրաստիճան բանակայիններ տիրական են, Երեւանի քաղաքին օր յայտնած է, թէ «ազարեկական» խմբակներ կը կանգնին արշաւի մը ետին՝ թրքական դպրոցներու մէջ քրտերէն կրթութիւն տալու նպատակով:

Նշեալ հարցին պատճառով հարիւրաւոր մարզիկ մեծամասնութեամբ ուսանողներ, որոնք այդ գծով աղերսազիր ստորագրած են, ձեռնարկուած են:

Ա. Ա. խորհուրդը իր ամսական հերթական ժողովին ընթացքին քննարկած է «տեղական եւ արտաքին աղբիւրներէ վնասակար գործունէութիւններ, որոնք երկրին ապահովութեան վտանգ կը սպառնան եւ կանխարգիլման միջոցառումները, որոնք առնուած են եւ պիտի առնուին անոնց դէմ»:

Ե. Միւլթիւրը կոչ ուղղած է Անգարայի, որ երկրին 12 միլիոն քրտերու բաղադրանքով ազատութիւնները ընդարձակէ:

ՊԱՂԵՍԻՆՅՈՒՔ ԵՒ ԱՐԱՅԱԹ...

Շարունակուած Ա. Էջէն

ցուց անկախ պետութեան մը առիթը: Նախագահ Ճորճ Պուշ Կեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Եգիպտոսի նախագահ Հիւսէյն Մուսարաբի հետ՝ յայտնելու համար անոր, որ յուսախաբ է պաղեստինցի ղեկավարէն:

Սպիտակ Տան բանբեր Արի Տիէյլըր յայտնեց, որ Ուաշինկթընի ներկայիս դժուար թէ համոզուի պաղեստինցի պետութիւն մը հաստատելու ծրագրերով: Ան աւելցուց, որ Արաֆատ կորսնցուց առիթը, երբ հետապնդեց վայրագութեան ու գէնքի քաղաքականութիւնը: Տիէյլըր դիտել տուաւ, որ Պուշ յանձնառու կը մնայ պաղեստինցի պետութեան ծրագրերին, սակայն խաղաղութեան գործընթացին աւարտին:

Պուշ Երկուշաբթի երեկոյան հեռուհեռային հաղորդակցութիւն մը ունեցած էր Մուսարաբի հետ, յայտնելու համար, որ յուսախաբ է Արաֆատէն եւ եգիպտացի նախագահէն պահանջելու, որ ճշուում բանցնէ պաղեստինցի ղեկավարին վրայ, որպէսզի սանձէ ծայրայեղականները: Մամոյլ սուլիսի մը ընթացքին, Պուշ ըսաւ, որ իր կեցուածքը յստակօրէն փոխանցած է Մուսարաբի, շեշտելով, որ Միջին Արեւելքի մէջ կայունութիւն ու խաղաղութիւն կը հաստատուի, երբ ահաբեկչութիւնը արմատախիլ ըլլայ: Պուշ աւելցուց, որ Արաֆատ պէտք է դատապարտէ ու մերժէ ահաբեկչութիւնը, ինչպէս նաեւ՝ ձեռնարկէ բոլոր անոնք, որոնք պատասխանատու են Իսրայէլի դէմ յարձակումներուն:

Պուշ քննադատեց նաեւ գինամթերք փոխադրող նաւուն միջադէպը, դիտել տալով, որ անիկա մեծաօդայն յուսախաբութիւնը պատճառեց, որովհետեւ ցոյց տուաւ, թէ պաղեստինցի իշխանութիւնը գէնքի ընտրանքը որդեգրած է:

Միւս կողմէ, Միջին Արեւելքի մէջ Ռուսիոյ ՄԱԿի եւ Եւրոպական Միութեան պատուիրակները վաղը Ուաշինկթընի մէջ հանդիպում մը պիտի ունենան ամերիկացի պաշտօնատարներու հետ, խորհրդակցելու համար պաղեստինցի սարայէլեան տագնապին մասին, յայտնեց ամերիկացի պաշտօնատար մը:

Անտրէ վտովին, Թերի Ռոտ Լարսոն եւ Միկէլ Անխէլ Մորաթինոս հանդիպում պիտի ունենան արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատար Ուիլիլմ Պըրնզի հետ: Կը նախատեսուի, որ պատուիրակները ճշուում բանցնեն Ուաշինկթընի վրայ, որպէսզի վերակախ միջնորդութեան՝ վերջ տալու համար տագնապին:

Արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ռիչըրդ Պուշը Երկուշաբթի օր ըսած էր, որ Ուաշինկթըն թէեւ առկախած է Անթրի Ջինիի առաքելութիւնը, բայցեւայնպէս յանձնառու կը մնայ Միջին Արեւելքի մէջ խաղաղութիւն հաստատելու խոստումին:

ԱՆԱՆ ԿԸ ԶՊՈՒՅԱՑՆԷ ԱՐԱՅԱԹԸ ՄԵԿՈՒՍԱՑՆԵԼԷ

ՄԱԿԻ ընդհանուր քարտուղար Քոֆի Անան կոչ ուղղեց Միացեալ Նահանգներուն՝ գործակցելու Միջին Արեւելքի տագնապին առնչուող երկու կողմերուն հետ: Ան զգուշացուց յատկապէս՝ Արաֆատը մեկուսացնելէ:

Անան ըսաւ, որ Արաֆատ պիտի չկարենայ ղեկավարել պաղեստինցիները, եթէ մեկուսացուի ու զրեթէ բնակարանային կալանքի տակ առնուի: Անան աւելցուց, որ պէտք է աւելի զգուշ ըլլալ, որովհետեւ երբ տկարանայ ղեկավարը, որ ստանձնած է ղեկը, անի կացութիւն մը պիտի ստեղծուի: Անան շեշտեց, որ Միացեալ Նահանգներ պէտք չէ հրաժարին հովանաւորել խաղաղութեան գործընթացը, ոչ ալ պէտք է կողմերէն մէկուն կամ միւսին հետ գործակցել միայն՝ անտեսելով ու մեկուսացնելով երկրորդը:

● ՌՈՒՍԻԱ կոչ ուղղեց Իսրայէլի եւ պաղեստինցիներուն՝ դատապարտելու վայրագ արարքները ու մերժելու զանոնք: Արտաքին գործոց նախարարութեան բանբերը պահանջեց, որ հակամարտ կողմերը քաղաքական միջոցներով փորձեն լուծել տագնապը:

● ԻՐԱՆԻ նախագահ Մոհամէտ խաթեմի պահանջեց հաստատումը մասնաւոր ֆոնտերու, որպէսզի պաղեստինցիները կարենան դէմ դնել Իսրայէլի: Խաթեմի աւելցուց, որ ֆոնտերը պէտք է հաստատուին իսլամական խորհրդաժողով կազմակերպութեան կողմէ:

● ՍԷՆԵԳԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ Իսրայէլը ամբաստանեց պաղեստինցիներուն պետական ծրագրուած ահաբեկչութիւն գործելու յանցանքով: Ներքին գործոց նախարար Իշխան Նայէֆ կոչ ուղղեց բոլոր արդար իրիզներուն դէմ դնելու Իսրայէլի որդեգրած միջոցառումներուն:

ԻՐԱՔ

ՄԱԿԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ՊԵՆՈՆ ՍԵԻԱՆ ՊԱՂՏԱՏԻ ՄԵՋ ԿԸ ԸՏԱՊԵՆԴԷ ՎԻՉԱՆԵՐՈՒ ԸԱՐՅԸ

ՄԱԿԻ պաշտօնատար մը Իրաքէն պիտի պահանջէ մուտքի յաւելեալ արտօնագիրներ տալ ՄԱԿի անանկապմին, որուն անդամները կ'օժանդակեն հիւսիսային շրջանները ականւեռէ մաքրելու աշխատանքին, յայտնեցին Պաղտատի մէջ դիւանագիտական աղբիւրներ:



ՊԵՆՈՆ ՍԵԻԱՆ

ՄԱԿ յայտնեց, որ անցեալ տարի Իրաք մերժած է մուտքի արտօնագիր տալ մուսուրապէս երեք հարիւր հոգիի: Անոնք պայմանագրութիւններ ստորագրած էին ականւեռու մաքրագործումի աշխատանքին համար հիւսիսային քրտաբնակ շրջանին մէջ:

Դիւանագիտական աղբիւրները յայտնեցին, որ ՄԱԿի «քարիւղի փոխարէն սննդանիւթ» ծրագրին գործադիր տնօրէն Պենոն Սեյան, որ Պաղտատ կը գտնուի, վիզաներու հարցը պիտի արձաժոյժէ Իրաքի պաշտօնատարներու հետ: Սեյան ըսաւ, որ վիզաներու պատճառով ուշացումը անցեալ տարի 4 միլիոն տղար վնաս պատճառած էր մարդասիրական ծրագրին:

Պաղտատ քաղաքացիութիւն կու տայ ըսելով, որ ինչո՞ւ արտօնագիր պիտի տալ օտարներու, երբ անոնց կատարելիք գործը իրաքցիներ ալ կրնան ընել: Պաղտատ ըսաւ նաեւ, որ անցեալ տարի մուտքի արտօնագիր տուած է ՄԱԿի 991 պաշտօնատարներու պաշտօնէտի:

Միւս կողմէ, Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա երէկ վիեննա ուղղուեցաւ:

Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյնէն նամակ մը յանձնելու համար ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի, յայտնեց Լիկայի մէկ բանբերը: Ան ըսաւ, որ Մուսայի յանձնելիք նամակը կ'առնչուի Իրաք - ՄԱԿ տիւրքի ծրագրի մը:

Մեկնումի պահուն, Գաիթի օրակայանին մէջ Մուսա հաստատեց, որ նամակ մը պիտի յանձնէ Անանի, սակայն ան մանրամասնութիւններ չփոխանցեց նամակին բովանդակութեան մասին: Մուսա անցեալ Շաբաթ Պաղտատ ալ չեղած ու հանդիպում ունեցած էր Սատամի հետ:

Իրաք կը պահանջէ, որ ՄԱԿի հաստատած պատճառագրութիւնը չընդունուի, սակայն Ապահովութեան խորհուրդը տակաւին կը անոնց կատարելիք գործը իրաքցիներ ալ կրնան ընել: Պաղտատ պէտք է վերադարձի արտօնութիւն տալ պէնքի քննիչներուն: Ապահովութեան խորհուրդի նախագահ Արիստիտի Միացեալ Նահանգներ կ'առաջարկէ «խելացի» պատճառագրութիւններ ունեցնելու նոր ծրագիր մը, որ սակայն կը մերժուի յատկապէս՝ Ռուսիոյ կողմէ, որ քանի մը

ամիս առաջ սպառնացած էր վերջի իրաւունքը գործածել, եթէ քննարկումի դրուի առաջարկը:

Այս ուղղութեամբ, յառաջիկայ շաբաթ ժընեւի մէջ հանդիպում պիտի ունենան ամերիկեան ու ռուսական պատուիրակութիւններ՝ քննարկելու համար պատճառագրութիւնը:

Միացեալ Նահանգներ եւ Ռուսիա համաձայնեցան պատրաստել ցանկ մը կարգ մը անտարրութիւններու, որոնք Իրաքի կողմէ կրնան ներածուիլ պատանգ սպառելու պատճառով շրջանէն: Մուսա կ'ըսէ, որ Իրաքէն իր հողերը հասնող քարիւղատար խողովակը քանի մը անգամ փորձած է եւ թէ օրական քարիւղ չի ստանար Իրաքէն: Խողովակը 1982-2000ի վերջնաւորութիւնը փակ մնացած էր:

● ԻՐԱՔԻ առեւտրի նախարար Մոհամէտ Մաիտի Սայիի «յայտնեց, որ 1999էն ի վեր, Պաղտատ մէկ միլիար տոլարի ներածում կատարած է Մեքսիկայի Արաբիայէն: Ան աւելցուց, որ ներածումը չէ ենթարկուած «քարիւղի փոխարէն սննդանիւթ» ծրագրին եւ պատճառագրութիւններու պատճառով չընդունուի:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՐԱՔԷՆ ՔԱՐԻՒՂ ԳՆԵԼՈՒ ԳՏՈՎ

ԲՐԻՏԱՆԻԱ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՆ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ ՍՈՒՐԻԱՅԵՆ

Բրիտանիա բացատրութիւն պահանջեց Սուրիայէն՝ առանց ՄԱԿի արտօնութեան իրաքէն օրական հարիւր հազար տակաւ քարիւղ գնելուն համար:

Դիւանագէտներ յայտնեցին, որ Բրիտանիա հարցը արձարծեց ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին մէջ, որուն նորագոյն անդամներէն է Սուրիա: Բրիտանացի դիւանագէտներ կ'ըսեն, որ իբրեւ Ապահովութեան խորհուրդի անդամ Սուրիա պարտաւոր է պատասխան մը տալու իրեն ուղղուած ամբաստանութեան:

Սուրիոյ ղեկավար Միխայիլ Ուէհաբի նիստի աւարտին թղթակցեցնու հետ հանդիպումի մը ընթացքին ըսաւ, որ ըսելիք չունի բրիտանացի ղեկավարին ամբաստանութիւններուն մասին: Սակայն, ղեկավարը կը նախատեսէ, որ պատճառագրութեան յանձնարարութիւնը յառաջիկայ նիստին Բրիտանիա պիտի պնդէ, որ Սուրիա լուսարանութիւնը տալ:

Բրիտանիա կ'ըսէ, որ Սուրիա օրական այդ քանակութեամբ քարիւղ գնելով Իրաքէն՝ կը խախտէ Իրաքի դէմ հաստատուած ՄԱԿի պատճառագրութիւնը եւ կը մերժէ ճշմարտութիւնը ըսել:

Քարիւղի մասնագէտներու փոխանցած տեղեկութիւններու համաձայն, 2001ին, Սուրիա օրական հարիւր հազար տակաւ ներածած է Իրաքէն երկարած խողովակի մը միջոցով: Անոնք կ'աւելցնեն, որ Սուրիա կարողութիւն ունի կրկնապատկելու քանակը եւ զայն իր նաւահանգիստներէն արտածելու: Բրիտանիոյ համաձայն Սուրիա իրաքէն քարիւղ կ'արտածէ՝ յայտարարելով սակայն, որ սուրիական է:

Սուրիա կ'ըսէ, որ Իրաքէն իր հողերը հասնող քարիւղատար խողովակը քանի մը անգամ փորձած է եւ թէ օրական քարիւղ չի ստանար Իրաքէն: Խողովակը 1982-2000ի վերջնաւորութիւնը փակ մնացած էր:

ԹՈՒՐԶԻԱ

«ԷՄԵԼՍԹԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԸՆԸԼ» ԿԸ ՀՐԱԻՐԷ

ԱՆԳԱՐԱ, 29 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիա «Էմելսթի Ինթերնեշնլ»-ը հրաւիրած է երկիր վերադառնալու՝ մարդկային իրաւանց այդ կայմակերպութեան Թուրքիայէն հեռանալէն շուրջ երկու տասնամեակէ ետք:

Թուրքիա պէտք է բարելայէ մարդկային իրաւանց խախուտ իր մարզը, եթէ կ'ուզէ տասնամեակներու իր իրաւանց իրականացնել՝ ինչ կը վերաբերի Ե. Միութեան անոր անդամակցութեան:

Կառավարութիւնը որեւէ պատճառ չէր տուած Նոյեմբերին, երբ մերժած էր «Էմելսթի»ի Թուրքիոյ մէջ գործողութիւնները վերսկսելու առաջարկը, սակայն անիկա աւելի ուշ որոշած է վերատեսութեան ենթարկել դիմումագիրը, ըստ պետական նախարար Նեճատար Արսէնէնի, որ մարդկային իրաւանց մարզին պատասխանատու է:

Մարդկային իրաւանց խմբակներ կ'ըսեն, թէ Թուրքիոյ մէջ տասնամեակներ յայնսօրի են, իսկ Պրիքսի կը յայտնէ, թէ Ե. Միութեան թեկնածուն շատ բան ունի ընելիք մարդկային իրաւանց մարզին մէջ, նախքան անոր լիիրաւ անդամ դառնալը:

«Էմելսթի» Թուրքիոյ մէջ իր գրասենեակը փակած է 1980ական թուականներու սկիզբներուն, 1980ի պիւնտրական պետական հարուածէն ետք:

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊՊԵՍ
ԳՈՐԾԱԾԵՑ FUEL CARD-Ը

IGOL
MOTOR OIL

Ձեր ինքնաշարժից պենզին, մագնիսը, իւրից, ինչպէս նաեւ լուալու համար, մեքանիզմը հետ միաժամանակ մերկայացուցէք **FUEL CARD-ը**, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊՊԵՍ ՍՍՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.-

- ԱՅՏԻԼԻ գրասենեակ, Պուրճ Համուտ
- Համագրայի մի գրասենեակ, Պուրճ Համուտ
- Գրատուն Caravelle, Շալթա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
- Obelix հաստատութիւն, Անթիլիաս

Յաղութի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 քիւրու:

Յաղութի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 01-242556 քիւրու:

ԱՐԺԷՔՄԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՅՆՈՒՄԸ

ՔԱՐՏԸ ԿԸ ՍՏԱՆԱԶ ԶՐԻՕՐԷՆ

ԴԷՊԻ ՍԷՆՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԿՍԱԻ

ՌԻՍ, 29 (ՌՈՅԹԸՐԸ).- Հազարաւոր իսլամ ուխտաւորներ արդէն իսկ Նուրդուած են դէպի Մեքսիկայի Արաբիա, մասնակցելու համար իսլամութեան սուրբ քաղաքներուն՝ Մեքքէի եւ Մեդինէի մէջ տարեկան ուխտագնացութեան, համին:

Մեքսիկայի Արաբիոյ ապահովութեան ուժերը ապահովական խիստ միջոցառումներ որդեգրած են, իսլամ ծայրայեղականներու կողմէ քաղաքական գործունէութիւններու եւ արարքներու կանխարգիլման համար:

Օդակայանի պաշտօնատարներ փոխանցեցին, որ արդէն իսկ 150,000 իսլամներ հասած են Ռիատ, մասնակցելու կրօնական արարողութեան: Անոնցմէ անկախ, Ռիատի մէջ արդէն իսկ երկու միլիոն սէնտցի պիտի մասնակցի իսլամական համին:

«Այս տարուան համին առիթով սովորական է դուրս քայլերու չենք դիմած, սակայն 11 Սեպտեմբերի դէպքին առնչութեամբ ապահովութիւնը քիչ մը աւելի խստացուցած ենք առաջը առնելու հաւանական որեւէ անօրէնութեան», յայտնեց ապահովութեան պաշտօնատարներէն մէկը:

Քուէթեան մամուլը վերջերս լուսարձակի տակ առած է գաղտնի սպասարկութեան այն տեղեկութիւնները, թէ Միացեալ Նահանգներու վրայ 11 Սեպտեմբերի ահաբեկչական յարձակումի գլխաւոր կապաժելի Ռուսմա Պըն Լատէնի յօրակիցները, որոնք փախուստ տուած են Աֆղանիստանէն, կրնան անգամ մը եւս մուտք գործել Մեքսիկայի Արաբիա, համի ընթացքին:

**«ԵՐԿԻՐ»Ը
ԿԸ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ**

Ուրբաթ, 25 Յունուարին, Հայաստանի մեր պաշտօնակից «Երկիր» քերթը վերսկսեց լույս տեսնել իբրև շաբաթաթերթ: Կարճ դադարի մը ետք «Երկիր» հրատարակ կը վերադառնայ նոր որակով ու ծախսով, կը շարունակէ արտայայտել՝ «սկզբունքային կեցուածք մեր երկիրը արատաւորող, մարդոց բարգաւաճումը, ազատութիւնն ու հաւատքը ի չիբ դարձնող ու արգելադրող անառողջ երեւոյթներու, անարդարութիւններու եւ պետական - վարչական կառուցներու նկատմամբ»:

Հայրենի ընթերցողին ուղղուած խմբագրական խօսքի մը մէջ «Երկիր» կը յայտնէ, թէ ինք կը վերսկսի աշխատանքը պատասխանատու եւ առարկայական մամուլի օրինակը մնալու վճարովանութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆ

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ
ՆՈՐԱՍՏԵՂԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ՍԿՍԻ
ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

Հայաստանի քաղաքացիական ծառայութեան նորաստեղծ խորհուրդի նախագահ Մանուէլ Բաղդասարյան լրագրողներուն հետ հանդիպման մը ընթացքին կարեւոր նկատած է այն հարցը, թէ «քաղաքացիական ծառայութեան մասին» օրէնքէն կը բխին աւելի քան 20 իրաւական փաստաթուղթեր: Ըստ անոր, արդէն որոշ կէտերու գծով նախագիծեր կան, եւ անոնք կը ներքո առանց խորհուրդին համաձայնութեան չեն կրնար աշխատանքէ կրկնապարտուել: Մ. Բաղդասարյան նշած է, թէ որեւէ համակարգի ղեկավարի փոփոխութեան պարագային կառուցչին մասնագէտները կը դիմագրաւեն անգործ մնալու վտանգը: Ըստ անոր, խորհուրդը պէտք է ձեւով մը լուծուի գտնել այս հարցերուն: Ան ըսած է, թէ հասարակութեան ընդ որ շերտերը մտահոգող այս կամայականութիւնները արմատախիլ ընելու ուղղութեամբ յստակ քայլեր պէտք է առնուին: Ըստ անոր, այս միջոցները նաեւ պիտի օժանդակեն երկրին մէջ կայուն եւ նպաստաւոր պայմաններու ստեղծման: Մ. Բաղդասարյան ըսած է, թէ խորհուրդը աշխատանք կը տանի օրէնքին զորոնք կը ստանալու: Ըստ օրէնքին, խորհուրդը կ'ընդունի օրէնքով

**«ԼՈՒՔՕՅԼ»Ը ՑԱՆԿԱՆՈՒՄ Է
ՄԱՍՆԱԿՑԵԼ ՊԱՔՈՒ - ՃԵՅՄԱՆ
ԽՈՂՈՎԱԿԱԾԱՐԻ ԾԽԱՐԱՐՈՒԹԵԱՆԸ**

**ԱԼԻԵՒԸ ՄՈՍԿՈՒՎՅՈՒՄ
ՓՈՒԹԻՆԻ ԵՒ ՔԱՄԻԱՆՈՎԻ
ՀԵՏ ՔՆՆԱՐԿՈՒՄ Է
ՆԱԵՒ ԱՅՍ ՀԱՐՅԸ**

Ռուսաստանը կարող է մասնակցել մի նախագծի, որի դէմ պայքարում էր երկար ժամանակ: Պետական այցով Մոսկուայում գտնուող Ազգայնականի նախագահ Հ. Ալիբեյ Կրեմլում եւ Սպիտակ Տանը կը քննարկի ռուսական կողմի՝ Պաքու - Թիֆլիս - Ճէյհան քարիւղատարի շինարարութեանը մասնակցելու հնարաւորութիւնը:

1900ական թուականներին կէսերին, երբ Կասպիցի աղի հանքավայրերում հանքավայրերի շահագործման խոշոր միջազգային պայմանագրեր կնքուեցին, Ռուսաստանը ընդ շահեք չթափեց, որպէսզի, նախ՝ իր շահերը պաշտպանի չէնց այդ հանքավայրերում, երկրորդ՝ ազգայնական կարիւղի հիմնական հոսքը ուղղի արդէն կառուցուած Պաքու-Նոյոպոսիք քարիւղատարով: Ժիշդ է, այդ քարիւղատարն անցնում էր ապստամբ Չեչենիայի տարածքով, բայց ռուսական զօրքերը ժամանակին՝ էջենական առաջին պատերազմի ընթացքում, մաքրեցին այդ ճանապարհը:

Միացեալ Նահանգները շահագրգռուած էին ազդու պէյհանական քարիւղի առաքման թրջական տարբերակով, որի ճանապարհը Ռուսաստանը չէր կարողանալ վերահսկել: Պաքու - Թիֆլիս - Ճէյհան խողովակաշարի կառուցման համաձայնագիրը կնքուեց 1999 թուականի Նոյեմբերի 18ին՝ ԵԱՀԿի Պոլսոյ վեհաժողովի շրջանակներում: Համաձայնագիրը ստորագրեցին Ազգայնականի, Թուրքիայի, Վրաստանի եւ Միացեալ Նահանգների նախագահները: Հետագայում համաձայնագրին միացաւ Ղազախստանը՝ համաձայնելով դադարական քարիւղի նշանակալի մասը բաց թողնել Պաքու - Ճէյհանի նախագծի շինարարութեանը մասնակցելու ցանկութիւն յայտնեց ամերիկեան խոշորագոյն քարիւղի «Մեթրոն - Թեքսաքո» ընկերութիւնը:

Նախնական տուեալներով, 1730 քմ. երկարութեամբ քարիւղատարի թողունակութիւնը 55-60 միլիոն թոն է մէկ տարում: Նախագծի արժէքը զնահասուում է աւելի քան 3 միլիարտ տոյար, ընդ որում Միացեալ Նահանգները արդէն պատրաստակամութեամբ է յայտնել տրամադրելու 2,5 միլիարտ տոյար:

Մոսկուայի դիրքորոշումը խիստ փոխուել է: Չկարողանալով պնդել քարիւղատարի սեփական տարբերակը, Ռուսաստանը փորձում է ստեղծուած խրափուկական կողմից գոնէ ինչ-որ օգուտ ստանալ: Հայտար Ալիբեյ նախագահ Փուլիին եւ վարչապետ Քասեանովի հետ քննարկելու է Պաքու - Թիֆլիս - Ճէյհան քարիւղատարի շինարարութեանը Ռուսաստանի մասնակցութեան հնարաւորութիւնը: Նախաձեռնութիւնը ոչ այնքան պաշտօնական Մոսկուային է, որքան՝ քարիւղի «Լուքօյլ» ընկերութեանը: Ընկերութեան նախագահ Վախիթ Ալիբեյբեյովը (ազգութեամբ ազրպէյճանցի - խմբ.) օրերս լրագրողներին ասել է, որ «Լուքօյլ» ռուսական ընկերութեանը Պաքու - Ճէյհան նախագիծին մասնակցելու հնարաւորութիւնը: Գրական որոշում ընդունելու դէպքում, ըստ Ալիբեյբեյովի, ընկերութիւնն ակնկալում է ստանալ 7,5 տոկոս մասնակցութիւն: Ալիբեյբեյովը Պաքու - Ճէյհան նախագիծը զնահասուում է տնտեսապէս շահաւէտ: Այսօր «Լուքօյլ» ռուսական ընկերութեանը է Կասպիցի հիւսիսային հատուածից արդիւնահանուող քարիւղը Պաքու-Ճէյհանով առաքելու հնարաւորութիւնը:

Միաժամանակ, Պաքու-Ճէյհան նախագծի տնտեսապէս շահաւէտութիւնը խիստ վիճելի է: Այն կարող է շահաւէտ լինել, պայմանաւ, որ ամէն տարի այդ խողովակաշարով հոսի 50 միլիոն թոն քարիւղ, մինչդեռ փորձագիտական գնահատականները ցոյց են տալիս, որ Կասպիցի հանքավայրերում չկայ այդպիսի քանակութեամբ ուժանիւթ: Գնեւեւ պատրաստ չեն նաեւ նախագծի թեքնիք - տնտեսական հիմնաւորումները: Նախատեսուած է դրանք աւարտել 2002 թուականի աշնանը: Պաքու - Ճէյհանի նախատեսուած է 2005 թուականին բաց թողնել քարիւղի առաջին շահագործումը:

**ԿՈՉՈՒՄՆԵՐ՝
ԲԱՐՉՐԱՍՏԻՃԱՆ
ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ**

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան 25 Յունուարին հրամանագիր մը ստորագրած է Հայաստանի զինուած ուժերու գլխաւոր հրամանատար եւ Հայաստանի պաշտպանութեան առաջին փոխ նախարար Գօր. Միքայէլ Յարութիւնեանին զօրավար - գնդապետի աստիճան շնորհելու մասին:

Ըստ Հայաստանի նախագահի մամուլի գրասենեակին, նախագահ Ռոպէրթ Քոչարեան նոյն օրը հրամանագիրներ ստորագրած է նաեւ Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարար Գնդ. Ալիք Միրզաբէկեանին, Հայաստանի զինուած ուժերու գլխաւոր հրամանատարութեան հետախուզական վարչութեան պետ Գնդ. Բասենցի Ազոյեանին, զինուած ուժերու գլխաւոր հրամանատար տեղակալ Գնդ. Ռաֆայէլ Գոզդեանին եւ զինուած ուժերու թիկունքի վարչութեան պետ Գնդ. Տիգրան Գասպարեանի զօրավարի աստիճան շնորհելու մասին:

**ՌՈՒՍԻՈՅ ՀԱՅԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՅՑԵԼԷ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՕՍԵԹԻԱ**

19 - 20 Յունուարին Հիւսիսային Օսեթիոյ վրտակազ շրջանը այցելեց Ռուսիոյ Հայերու միութեան մէկ պատուիրակութիւնը՝ միութեան նախագահ Արա Արաւահանի գլխաւորութեամբ: Այցելութիւնը տեղի ունեցած է Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի հետ կապուած յորէնեական ձեռնարկներու շրջագիծին մէջ:

Պատուիրակութիւնը այցելած է վրտակազի հայկական եկեղեցի, հանդիպում ունեցած է «Էրեբունի» ազգային մշակոյթի կեդրոնի աշխատակազմին եւ Հիւսիսային Օսեթիոյ մէջ ապրող 14 հազար Հայերու ներկայացուցիչներուն հետ: Հանդիպման ընթացքին արծարծուած են Հայաստանի եւ Օսեթիոյ պատմական - մշակութային կապերը, Ռուսիոյ Հայերու միութեան եւ Ռուսիոյ ենթակալ շրջաններու հայ համայնքներուն, ինչպէս նաեւ պատմական Հայրենիքին միջեւ կապերու ամրապնդման առնչուող հարցեր:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՈԳԵԿԱՆ
ՀԻՒԱՆԴՆԵՐՈՒՆ 65 ԱՌ
ՀԱՐԻՐԸ՝ ՏՂԱՄԱՐԴԻԿ**

Երեւանի քաղաքային հոգեբուժական դարմանատան մէջ 2001 թուականին արձանագրուած է 9592 հիւանդ, որմէ 1690ը՝ 60 տարեկանէն վեր:

Ըստ Երեւանի քաղաքապետարանի առողջապահութեան վարչութեան պետի տեղակալ Արմէն Մոչոյեանի, Հայաստանի մէջ արձանագրուած հոգեկան հիւանդներուն 65 առ հարիւր տղամարդիկ են, 35 առ հարիւր՝ կիներ:

**«ՈՍԿԵՐՉՈՒԹԻՒՆ - 2002»
ՅՈՒՑԱՀԱՆԴԻՄ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ**

10 - 14 Մայիսին Հայաստանի կառավարութեան նիստերու դահլիճին մէջ պիտի կայանայ «Ոսկերչութիւն - 2002» Յոր միջազգային ցուցահանդէս - վաճառք, որուն կազմակերպումը, Հայաստանի ոսկերչութեան եւ ազամանդագործութեան միութեան կողմից, պիտի իրականացնեն նաեւ ԱՊՀ-ի երկիրներու ոսկերչութեան միութիւններուն համադաշնակցութիւնը:

Հայաստանի ոսկերչութեան եւ ազամանդագործութեան միութեան գործադիր տնօրէն Արթուր Գիւլնազարեան ըսած է, թէ ցուցահանդէսի կազմակերպման աշխատանքներուն պիտի աջակցին՝ Հայաստանի արհեստագործական կառավարութիւնը, Ռուսիոյ «Ոսկերչ - վաճառք» միութեանը, Ուզպեքիստանի ոսկերչներու միութիւնը եւ Հայաստանի ձեւագէտներու միութիւնը:

Յուշահանդէս - վաճառքին տեղեկատուական աջակցութիւն պիտի տրուի նաեւ Ռուսիոյ «Նուրմի» ընկերութեանը, «Նուրմի» ընկերութեանը, «Սվիլո»-ը, «Վան» ձայնասփերուի կայանը, «Արմ Սէյ» եւ «ԱՐԻԿԱ» ընկերութիւնները:

Ըստ Ա. Գիւլնազարեանի, ցուցահանդէսի պիտի ներկայացուին ոսկերչական իրեր, զարդեր, ազամանդներ, ոսկերչական պիտոյքներ, ժամացույցներ, յուշանուէրներ, արհեստագործական առարկաներ, զարդեղէններ, գործիքներ: Կր սպասուի, որ այս ցուցահանդէսին մասնակցին նաեւ՝ Միացեալ Նահանգները, Քանադան, Իտալիան, Զուիցիան, Հնդկաստանը, Թուրքիան, Ռուսիան, Ուզպեքիստանը, Խորհրդային Միութեանը, Վրաստանը եւ Մոլդովիան ներկայացնող լրատուամիջոցներ:

Ա. Գիւլնազարեան նշած է, թէ ցուցահանդէս - վաճառքի շրջագիծին մէջ պիտի կայացուին ճիւղային խորհրդակցութիւններ, «կլոր սեղաններ», շնորհահանդէսներ, մրցումներ եւ այլ ձեռնարկներ:

**ԼԻԹԸԼ ԵՐԵՒԱՆ՝
ՄՈՍԿՈՒՎՅՈՒՄ ԵՒ ՄԷՋ**

Ինչպէս նաեւ Երբի, նոյնպէս ալ Մոսկուայի մէջ սկսած են ձեւաւորուել ազգային միատարր շրջաններ: Այս մասին ռուսական «Իվ Կեսիս» թերթին տրուած հարցազրոյցի մը մէջ ըսած է Մոսկուայի մարզի ներքին գործոց վարչութեան պատասխանատուներէն վրտակալ Սետիս, որուն համաձայն, «Մոսկուա ներկայիս ունի իր փոքրիկ Թիֆլիսը, լիբըլ Երեւանը, Շանկայը, Քապուլը, եւայլն»:

Սետիսի կը պատմէ, որ արդիւնաւորութիւնները իրենց հակադրուելու սկսած են Մոսկուայի եւ մարզի գործնականօրէն բոլոր պարենային շուկաները, հայերը սեփականացուցած են երթեւեկի սպասարկումը, ուղորանացիներ կը գաղտնի ընակարաններու յարդարումով, վրացիները զբաղդիմած են ճաշարանային աշխատանքին եւ միջնորդական գործառնութիւններուն մէջ, վիեթնամցիները աժան հազուատ կը ծախեն, թաթարները կ'աշխատին քարիւղի մարզին մէջ, իսկ տաճիկները՝ մերձմոսկովեան ազարակներուն մէջ:

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ «ԱՐՄԵՆԹԷԼ»Ի ՄԻՋԵԻ**

Հայաստանի կառավարութիւնը իր 24 Յունուարի նիստին հաստատած է իր եւ «Արմէնթէլ»ի միջեւ կայացած 60օրեայ բանակցութիւններուն արդիւնքները, որոնք ամրագրուած են համապատասխան համաձայնագիրով: Հայաստանի կառավարութեան կողմէ համաձայնագիրը ստորագրած է Հայաստանի արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեան, իսկ «Արմէնթէլ»ի կողմէ՝ ընկերութեան գործադիր տնօրէն Նիքոս Կէրկուլյան:

Դ. Յարութիւնեան լրագրողներուն ներկայացուցած է բանակցութիւններուն արդիւնքները: Ան նշած է, թէ 1 Փետրուարէն սկսեալ Հայաստանի մէջ պիտի սկսի գործել հեռաձայնի իւրաքանչիւր վայրկեան գործածելու համար վճարուած կատարելու գործելաձեւը: Այս ձեւը բոլորովին կը տարբերի բանակցութիւններէն առաջ «Արմէնթէլ»ի առարկած գործընթացէն: Քաղաքացիներուն համար կ'առաջարկուի երկու տարբերակ՝ 900 դրամ բաժանորդագրութիւն վճարելով իւրաքանչիւր անհատ կարելիութիւն պիտի ունենայ 360 վայրկեան ձեռնարկ իստելու (օրը 12 վայրկեան), իսկ անկէ ետք իւրաքանչիւր վայրկեանի համար պիտի վճարէ 4 դրամ, համապատասխան օգտագործելու պարագային՝ 1 դրամ: Կայ նաեւ այլ ընտրանք մը. քաղաքացին իւրաքանչիւր ամսուան սկիզբ

ը 5 օր կանուկ կը վճարէ 2400 դրամ եւ կ'օգտուի անսահմանազան հեռաձայնի կապէ: 2003 թուականին այս գումարը կը բարձրանայ 3600 դրամի, իսկ 2004ին՝ 4800 դրամի:

Իրաւարանական անձերու համար բաժանորդագրութեան վարձք կը մնայ նոյնը եւ «կանխավճարի» տարբերակով կը կազմէ 5100 դրամ, որ պիտի ընձեռնէ նաեւ համացանցի օգտագործութեան համար անսահմանափակ տեւողութեամբ գործածելու կարելիութիւն, 2003 թուականին այս գումարը պիտի հասնի 6300 դրամի, 2004ին՝ 7500 դրամի:

Դ. Յարութիւնեանի համաձայն, Հայաստանի մէջ բաժանորդները հեռաձայնէն պիտի օգտուին միջին հաշուով ամսական 280-310 վայրկեան:

Նախարարին համաձայն, Հայաստանի կառավարութիւնը պարտաւոր է մինչեւ Յուլիս 2003 ստեղծել այս մարզի յատուկ յանձնաժողով:

Համաձայնագիրով մը փոփոխութիւններ կատարուած են յունական Օ. Թի. Ի. ընկերութեան հետ կնքուած համաձայնագրին մէջ: Յունական ընկերութիւնը առաջին տարուան ընթացքին պէտք է կատարէ 100 միլիոն տոյարի ներդրում, իսկ յունացիները տարիններուն ընթացքին եւս նոյն գումարով ներդրում:

«ԱՉ»

Ռուսական մամուլից

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ
ԳՈՂ Ե ԳԵՈՐԳ ՉԱԻՈՒՇԻ
ԹԱՆԳԱՐԱՆԻ
ՎԵՐԱՆՈՐԳՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

26 Յունուարին Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան այցելեց Արագածոտնի մարզի Թալինի ենթաշրջան:

Շրջանի Իրինդ գիւղի դպրոցին խոստացած համակարգիչները յանձնելէ ետք, վարչապետը այնուհետեւ Աշնակ գիւղին մէջ ծանօթացած է Գեորգ Չաւուչի թանգարանի վերանորոգման ուղղութեամբ կատարուած աշխատանքներուն, որոնք տեղ զտած էին Հայաստանի կառավարութեան մշակած Արագածոտնի մարզի հիմնախնդիրներու լուծման ծրագիրին մէջ:

Ա. Մարգարեան զոհուած կառավարութեամբ արձանագրեց, որ սահմանուած պայմանաժամին վերանորոգման ու ներքին յարգարումի աշխատանքները արդէն իսկ կատարուած են:

La Souderie DE LUNETTES

La première au Liban

Autoroute Jdeideh Près Boghos Optic Tél. (01) 871261

STUDIO Lantern

• 4ր ստանճճճ ռուպի առիթճճճրու video

Գկարահանումճճճր

Ըեռ. 01-266866 Ել 03-695399

Միջապալին Քաղաքական Կեանք

ԺԱՄԱՆԱԿՆ Է ՇԱՐԺԵԼՈՒ

Մէկ կողմէ ամերիկացի եւ միւս կողմէ իրենց դժգոհ ժողովուրդին միջև նեղ կացութեան մատնուելով, սէնստոյի իշխաններ անցեալ շաբաթ վերջապէս ըսին, որ լաւ կ'ըլլայ եթէ Մէնտալան Արաբիոյ մէջ հաստատուած ամերիկացի զինուորները սկսին կապել իրենց ճամպուղիները: Արաբները ծանօթ են իրենց հիւրասիրութեամբ, սակայն 4500 ամերիկացի եւ 1000 բրիտանացի զինուորները այլեւս սպառած կրնան ըլլալ հիւրասիրութեան իրենց տրամադրութիւնները:

Լուրը սպորտային յարաբերութեան մէջ պաշտօնական որեւէ դիրք չունի: Սակայն ան մէկն է պետութեան հիմնադիր Ապտալ Ազիզ Մէնտալի որդիներու ժառանգորդներէն: Ամերիկեան - սէնտալան յարաբերութիւնները, որոնք սկսած են հիմնադիր Մէնտալի օրերուն, 1920ականներուն, այսօր փոքրամասն եզրին հասած են: Պաղ պատերազմի ամբողջ տեւողութեան, ամերիկացիք օգտագործեցին Մէնտալան Արաբիոյ դաւանած մոլորեանք եւ խտրական յարաբերութիւնները, հարուածելու համար խորհրդային Միութիւնը, թէ՛ Աֆղանիստանի, թէ՛ Պաքստանի, թէ՛ Կեդրոնական Ասիոյ իսլամական պետութիւններու, եւ թէ՛ Ապտալ Նասէրի եղբայրսիրին մէջ: Հարց ծագեցաւ եւ իսլամութեան նոյն տարբերակ թիրախ դնող Միացեալ Նահանգները:

Այն փաստը, որ Մէնտալան Արաբիա պատրաստ է վտանգի տակ դնելու իր հիմնական դաշնակիցին հետ իր յարաբերութիւնները, ցոյց կու տայ թէ որքան զօրաւոր է ռազմամէտ կրօնաւորներու կողմէ բանեցողութեան ճանաչումը: Մէնտալի բարձրաստիճան պաշտօնատարները յայտնեցին, որ Ռիատի, Ճեստայի եւ Պուրայտայի մէջ ծառայող կրօնաւորներ անցնող երկու շաբթուան ընթացքին գէթ պաշտօնապէս ներկայացուցած են իրենց հրաժարականները, իրենք բողոք չարունակելով ամերիկեան դին-



Ամերիկեան ուժերու անցարգել Սեուտական Արաբիոյ մէջ:

լորական ներկայութեան դէմ: Շէյխ Հաճուա Պըն Օբլա Շուալայի յուղարկուած ռուսները վերջին տարիներու ցարդ ամէնէն բազմամարդ յուղարկուած ռուսներն էր: Շէյխ Հաճուա «անհաւատներու» հետ գործակցող եւ իսլամութեան դէմ գործող իշխանները բանադրանքի արժանի նկատող առաջին ֆարուսն հրապարակած էր:

Սակայն, միայն շէյխերը չեն, որոնք այսպէս տրամադրուած են: Երբ ինքնուրուի արաբական կայք մը հրապարակեց ամերիկացիներու կողմէ ձերբակալուած «Քալիփա» ցանցի կասկածելի անդամներու ընտանիքները, հազարաւոր մարդիկ հեռաձայնեցին միմիկալ լուր համար ձերբակալուածներուն հարազատները: Միւս կողմէ, սէնտալի դէտեր նկատելու տան, որ ոճիւրի եւ թմրեցուցիչի առեւտրի երեւոյթները մեծ մազըլուցում արձանագրած են, իրենք ցուցանին՝ Սեպտեմբեր 11էն ետք օրինակներու թանկութեան տարածման:

Թագաւորութեան մը մէջ, որուն քաղաքացիներէն 15ը մաս կը կազմէին Սեպտեմբեր 11-ի յարձակումները իրագործող 19 անձերուն խմբակին, իշխանները անպահով կը զգան: Սերունդներ շարունակ սէնտալի պատանիներ եւ երիտասարդներ դաստիարակուած են աստուածաբանական աշխարհայեացքի համաձայն, ըստ որուն՝ իսկական իսլամները կը պայքարին «անհաւատ» ուժերու դէմ: Նոյնիսկ տակաւին զբաղող չյաճախած, սէնտալի երեխաներ կ'արտասանեն Օմարի՝ երկրորդ խալիֆայի սասցուածքը: «Ես արաբական թերակղզին պիտի մաքրագործեմ՝ հրեաներէ եւ քրիստոնեաներէ»:

Միացեալ Նահանգներ պիտի կատարեն իրենցմէ պահանջուածը: Ամերիկեան ներկայութեան գծով սէնտալիներ իրենց դժգոհութիւնը սկսան զգալի դարձնել այն օրէն, երբ ամերիկացի զինուորները սկսին Մէնտալան Արաբիա, 1990ին, երբ իրաք ներխուժեց Քուեյթ: Նուապարի մարիմըներու գործունեցիկ վրայ 1996ի յարձակումէն ետք ամերիկեան ուժերը տեղափոխուեցան օդուժի էմիր Սուլթան խարիսի, որ կը գտնուի Ռիատի եւ քարիւղի հեռուոր հանքերու մէջ եւ գտնուող անպատասխան շրջանը: Ասիական շրջանին մէջ ամերիկեան մեծագոյն խարիսի է: Հոսկէ է, որ կը համակարգուին իրաքի, եւ վերջերս Աֆղանիստանի դէմ կատարուող թռիչքները եւ օդային ուժերու կոնտրոլները: Նուապարի արդիականացուցաւ անցեալ Յուլիսին:

Այսուհանդերձ, ամերիկեան Քոնկրէսի գինւած ուժերու յանձնարարողութիւնը նախագահ Քարլ Լեյի անցեալ շաբաթ համաձայն գտնուեցաւ, որ թերեւս ժամանակակից հասած ըլլալ ամերիկեան ուժերը աւելի ապահով տեղ մը փոխադրելու, հաւանորդ Օման: Միւս կողմէ, Ռիատի մէջ Միացեալ Նահանգներու հրապարակ «Կալիֆ» թերթին հետ հարցազրույցի մը ընթացքին յայտնարուեց, «Յամենայնդեպ, մենք արդէն պիտի նուազեցնէինք Մոցի մէջ մեր զինուորներուն թիւը»:

Միացեալ Նահանգներ հաւատք կ'ընծայեն սէնտալիներու առաջադրանքին: Հակառակ Միացեալ Նահանգներէն 70 միլիոն տոլարի հասնող գէնքի գնումին, Մէնտալան Արաբիա տակաւին անօդանկան բազի մը կը նմանի ընդդէմ իրաքեան եւ իրանեան դայիերուն: Կարգ մը դէտեր կը հաւատան, որ իշխանները իսկապէս չեն ուզեր, որ ամերիկացիները հեռանան, եւ թէ սպորտային պարզապէս ներքին սպառումի համար են, վերականգնելու համար Ալ Մէնտալ ընտանիքին տկարացած օրինականութիւնը, իրենք երաշխաւոր թերակղզիի անկախութեան:

Իրականութիւնը այն է, որ այսօր Մէնտալան Արաբիոյ ժողովուրդը աւելի մեծ վտանգ կը ներկայացնէ իշխաններուն քան Սատամ Հիւսէյնը: Միւս կողմէ, սկիզբէն ի վեր Ռուսիան Պըն Հաւտէնի հիմնական նպատակը եղած է ամերիկացիները դուրս բերել Մէնտալան Արաբիոյ «բռնազրուեալ» սրբատեղիներէն: Ողջ կամ մեռած անոր փափաքը տակաւին կրնայ իրականանալ:

Թի՛ ՌՈՒՍԻԱ ԵՒ Թի՛ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԿՐԵԱՆ ՅԱԶԹԱԿԱՆ ԴՈՒՐՍ ԳԱԼ ՔԱՐԻՒՂԻ ՆՈՐ ԽԱՂԷՆ

Պաղ պատերազմէն անմիջապէս ետք հրատարակուած «Մեծ Խաղ» վերնագիրով յօդուածի մը մէջ, Փիթըր Հոփքըրը ներկայացուց ժամանակագրութիւնը 19րդ եւ 20րդ դարերուն կեդրոնական Ասիոյ մէջ շահապահովելու եւ ազդեցութիւն տարածելու համար Բրիտանիոյ եւ Ռուսիոյ միջեւ ծաւալուած պայքարին: Թագին գոհարը Հնդկաստանն էր, սակայն անոր հասնելու ճամբան կ'անցնէր Աֆղանիստանէն: Ներկայիս մրցանակը քարիւղն է եւ դարձեալ Աֆղանիստանն է մարտադաշտը: Սակայն այս անգամ խաղը կ'ընթանայ Միացեալ Նահանգներուն եւ Ռուսիոյ միջեւ:

Նորհրդային Միութեան քայքայումով Մոսկուա կորսնցուց իր ազդեցութեան հարաւային շրջանները: Ղազախստանը, Տաճիկիստանը, Ուզբեքիստանը, Թուրքմենիստանը, Նիւզիլանդիստանը ու Ազրայձանը: Այս երկիրները քարիւղով եւ բնական կազով հարուստ երկիրներ են, որոնք պահեստները հաւաքաբար կը հաւասարին Մէնտալան Արաբիոյ եւ իրաքի պահեստներուն: Վերջինները Միացեալ Նահանգներու քարիւղի միջին արեւելեան երկու կարեւոր մատակարարներն են:

Յետ խորհրդային փոխանցման շրջանի գլխաւոր երեւոյթը սակաւապետութիւններու եւ ոճրագործ խմբակներու ստեղծումն էր: Երկու տարի առաջ երբ Վլատիմիր Փութին ստանձնեց երկրին նախագահութիւնը, անմիջապէս փորձեց քանդել սակաւապետութիւնները:

Ճակատագրականօրէն, Փութին փորձեց նաեւ լուծել ուրիշ հարց մը, որուն բացակայութիւնը երկար տեւեց ի վեր կը զգացուէր ուս հասարակութեան մէջ, այն ալ՝ Միացեալ Նահանգներու կողքին, հաւասար աթոռի մը վրայ նստիլն էր: Փութին սերտ կապեր գործադրուց գերմանացիներուն եւ Ֆրանսացիներուն հետ: Ան բարեկամութեան դաշինք մը կը կնքէր Չինաստանի հետ: Սակայն, անոր կողմէ առնուած նոյնքան կարեւոր, թէ՛ եւ ոչ այդքան հրապարակային քայլ մըն էր ՕՓէՔի (Քարիւղ Արտաձող Երկիրներու կազմակերպութեան) ծիրէն դուրս ուսական քարիւղ վաճառելու որոշումը:

11 Սեպտեմբերը ստուսածատուր պարգեւ մըն էր Փութինին համար: Ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ Միացեալ Նահանգներուն միանալով՝ ան յաջողեցաւ նուազագոյնը երկու նպատակ իրագործել: Պահալին՝ Ռուսիա այսպիսով վերադարձաւ Միացեալ Նահանգներու հաւատար իր աթոռին եւ, երկրորդ, Չեչենիոյ մէջ Ռուսիոյ առած քայլերուն գծով ամերիկեան քննադատութիւնները քաջացան:

Սակայն, կարգ մը պատճառներով քարիւղի քաղաքականութիւնը Արեւմուտքին հետ Ռուսիոյ գարգացող յարաբերութեան ամէնէն կարեւոր դաշտը կրնայ ըլլալ: Քարիւղի սակ անկախօրէն ճշգրտելու Ռուսիոյ քաղաքականութիւնը նպաստեց վերջին երկու տարիներուն ուսական տնտեսութեան կայունացման: Քարիւղի սակերը ընդհանրապէս բարձր էին եւ 2000 թուականին Ռուսիոյ տնտեսական աճը 8 տոկոս էր: 2001ին անկախ 5 տոկոսէն ցած եղաւ: Սակայն տանամեակներէ ի վեր առաջին երկու տարիներէն է, որ Ռուսիա տնտեսական աճ կ'արձանագրէ, ինչ որ մեծապէս կը պարտի քարիւղի արտադրութեան եւ արտածման:

Միեւնոյն ատեն, Փութինի օրերուն Ռուսիա վերջապէս գիտցաւ վստահելի եւ պատասխանատու բանակցութիւն վարել ամերիկեան քարիւղի ընկերութիւններուն հետ: Ան յաջողեցաւ նաեւ յարգանքով եւ արդիւնաւէտ կերպով գործակցել իր նախկին հարաւային շրջաններուն հետ: Ասոր արդիւններէն մէկն է Ղազախստանի կասպեան քարիւղի հանքերէն դէպի Սեւ ծովու Նովորոսիսք նաւահանգիստը երկարող քարիւղատարը, որ կ'անցնի ղազախ եւ ուսական հողերու վրայէն:

Քարիւղատարին բացումը կատարուեցաւ անցեալ տարուան վերջերը: Քարիւղատարի ծրագիրը հետապնդուեցաւ վարչապետ Եւգենի Փրիմաքովի կողմէ եւ ծրագիրին կառուցումը սկսաւ 1999ին: Սակայն, Փութին ծրագիրին իրագործումը յառաջ տարաւ հակառակ տեղացի քաղաքագէտներու բուռն ընդդիմութեան:

Քարիւղատարը ամերիկեան ցարդ մեծագոյն առանձին ներգրումն է շրջանին մէջ: Քարիւղատարի ծրագիրին գործակիցներն են Ռուսիա, Ղազախստան եւ քարիւղի բանի մը ընկերութիւններ: Անոր գլխաւոր գնորդը «Թեքնիկ Եւրոօյլ»-ն է, որուն 50 տոկոսը կը պատկանի «Եւրոօյլ»-ի, 25 տոկոսը «Էքսոն Մոպիլ»-ի, իսկ մնացեալը կը բաժնուի ուս եւ ղազախ գործակիցներու միջեւ: Ղազախստանի տնտեսութեան մէջ անցեալ տարի 13 տոկոսի աճ կ'անկախէր գլխաւորաբար քարիւղի ճարտարարուեստին շնորհիւ:

Մէկ խօսքով, Փութին յաջողած է քարիւղն ու քաղաքականութիւնը լաւ ձեռով իրարու խառնել: Կ'ակընկալուի, որ քարիւղի սակերը շարունակեն նուազիլ որոշ ժամանակ մը, սակայն ապագայի պատկերը յստակ է: Կեդրոնական Ասիոյ քարիւղի հանքերը պիտի օգտագործուին եւ Ռուսիա մեծ բաժին պիտի ունենայ անոնցմէ ստացուած շահին մէջ: Ամերիկեան քարիւղի ընկերութիւնները եւս մեծ առնչութիւն պիտի ունենան անոնց հետ: Կարեւոր հարցը այն է, որ արդեօք Միացեալ Նահանգներ պիտի կարենան ամբողջովին իրենց շահերուն ծառայեցնել այդ մէկը:

Աֆղանիստանի պատերազմը այս հարցին կ'անընդհատ երկու իմաստով: Առաջին, անիկա առաջին անգամ ըլլալով քաղաքականապէս կարելի դարձուց Աֆղանիստանէն եւ Փաքիստանէն անցնող քարիւղատարի մը կառուցումը 1990ականներու կէսերէն ի վեր, երբ «Եւրոօյլ» եւ արժամթիւնեան «Պրիտա» ընկերութիւնը սուր մրցակցութեան մէջ մտան աֆղաններու իրաւունքներուն համար:

Երկրորդ, պատերազմը պատճառ դարձաւ, որ քաղաքական ամերիկացիներ զգան, որ Մէնտալան Արաբիան բացառիկ դաշնակից մը չէ: Մէնտալան վարչակարգը Արեւմուտքին համար կարեւոր է իր քարիւղին համար: Հետեւաբար, աւելի նպաստաւոր է սէնտալան (չըսելու համար նաեւ իրաքեան) քարիւղէն կախեալ չըլլալը եւ բոլորովին անկախ ըլլալը: Իսկ անկախութեան որեւէ փորձ կ'անցնի Աֆղանիստանէն:

Ասիական ապագամտօրէն «Մեծ պատերազմ» բաժինը չէ: Ռուսիոյ, Ղազախստանի, Թուրքմենիստանի եւ շրջանային այլ ուժերու հետ ամերիկեան գործակցութիւնը աւելի կը կշռէ՝ քան անոնց հետ հակառակութիւնը:

20րդ դարու միջին արեւելեան տագնապը կարելի է բացատրել խորհրդային - ամերիկեան մրցակցութեամբ, ուրիշ մեծ խաղ մը, որ մեծ վիշտերու պատճառ դարձած է:

Պէտք չկայ նոյնը կրկնելու Կեդրոնական Ասիոյ մէջ եւ շատ մը պատճառներ կան չկրկնելու: Ընդդիմութենէ համագործակցութեան երթուղով, Ռուսիա կրնայ վերատեսուցութեան ենթարկել իր յարաբերութիւնները շրջանային գնորդներուն՝ Սատամ Հիւսէյնի եւ իրանեան բանակին հետ, իսկ Միացեալ Նահանգները զգուշ պէտք է ըլլան Կեդրոնական Ասիական երկիրներու մէջ զինուորական խարխալներ հաստատելու պարագային: Նախընտրելի է աւելի մեծ թիւով միացեալ քարիւղատարներ կառուցել եւ աւելի նուազ թիւով խարխալներ հաստատել:

ՌԵՉԵՆՏ ՊԵՏԵՐ

«Ինքըրնէշընըլ Էնթրաթ Թրիպլուց»

ՅԱԶՈՐԴԸ ԿՈՎԿԱՍՆ Է

Հիմա որ արեւմտեան ուժեր հաստատուած են Կեդրոնական Ասիոյ մէջ (եւ ըստ դէտերու մտադիր չեն հեռանալու մօտիկ ապագային), նախկին խորհրդային երկիրներու մէջ ՕԹԱՆի խարխալներու հաստատումը ենթադրելի կարելիութիւն մը չէ այլեւս: Իրապաշտական է մտածել, որ ՕԹԱՆ բաւական աշխուժ պիտի ըլլայ Կեդրոնական Ասիոյ եւ Կովկասի մէջ: Միջազգային ծայրայեղականութեան դէմ պայքարող կառույցներ պիտի հաստատուին յատկապէս այն շրջաններուն մէջ, ուր ահաբեկչական գործունէութիւնը զարգացման մեծ հաւանականութիւններ ունի: Ազրայձանի մէջ տարիներէ ի վեր կը գործեն խմբակներու մեծ կազմակերպութիւններ, որոնք սերտ կապեր ունին չեչէն անջատողականներու հետ, եւ Պաքու գրեթէ ոչինչ կատարած է արգիլելու համար անոնց հակառուս գործունէութիւնը: Այդ մէկը ընելը դժուար չէ Պաքուի համար: Արեւմուտքը Մոսկուան կը քննադատէ Չեչենիոյ իր զինուորական գործողութիւններուն համար, եւ բնականաբար աչք կը խփէր չեչէններուն դուրսէն ուղարկուող օժանդակութիւններուն:

Սեպտեմբեր 11ը արմատապէս շրջեց կացութիւնը: Թուրքիա պատրաստակամութիւն յայտնեց Ռուսիոյ յանձնել Մոսկուայի Ուսուկովը, իսկ ազրայձանական գաղտնի գործակալութիւններ քանի մը գործողութիւններ կատարեցին իրենց երկրին մէջ գործող ծայրայեղականներու դէմ: Չմարս սկիզբը, մեծ շուքով արգիլուեցաւ «Հիլպու Թաքիր» ծայրայեղ իսլամական միջազգային կազմակերպութեան Պաքուի թեւին

գործունէութիւնը: Պաշտօնական տեղեկութիւններու համաձայն, «անոնց ղեկավարները ահաբեկչական շաբաթ մը արաբներ կը պատաստէին Ազրայձանի եւ Կովկասի մէջ թիրախներու դէմ»:

Դեկտեմբերին, Ուաշինգթոն օակախեց Ազրայձանին ամերիկեան օժանդակութիւններ արգիլող պատժամիջոցը: Ամերիկեան վարչակազմը Գոնկրէսը մղեց արտօնելու Կովկասի շրջանի երկիրներու բանակներու արդիականացման համար տրամադրուելիք օժանդակութիւնները:

Պարզապէս բնական է, որ Թուրքիա ընտրուած է իրեն շրջանին մէջ ամերիկեան նոր քաղաքականութեան «վարիչ»: Անգարա անմիջապէս դիմեց վրաստանի Մառնէնըլ շրջանի զինուորական օրակայանի արդիականացման: Հին պիտի հաստատուի թրքական օդուժի խարխալ մը: Վերջերս Թուրքիոյ վարչապետ Պիլէչինի ծեծելիք Ուաշինգթոն այցելութեան ընթացքին արժարձուեցաւ Ազրայձանի մէջ թրքական զինուորական խարխալ մը հաստատման կարելիութիւնը: Կարգ մը աղբիւրներու համաձայն, Թուրքիա երկու խարխալ կրնայ ունենալ Ազրայձանի մէջ՝ Պաքուի եւ Գերաւամիւրի մէջ:

Քեմալին հաւանաբար տայ իր հաւանութիւնը, ինչպէս ըրած էր Ուազաբիստանի, Նըրբեքիստանի եւ

ԱՐՄԷՆ ԽԱՆՊԵՏԵԱՆ

«Նեգալիսիմայա Կագեթա»

Ա Յ Ի Լ
ԻՆՔՆԱՇԱՐԺԻ
ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

85\$

●SOS FREE OF CHARGE
ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՓՈՒՍԱԳՐՈՒԹԵԱՆ
ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԶՐԻ

ՀԱՍՑԷ.- ԱՅԷՏԻ ՇԵՆԷ Բ. ՅԱՐԿ
ՀԵՌ. 01-242556 եւ 01-242557

www.lemagan.com

«ՏԻ ԷՔՈՆՍՏՍՈՒ»

ՇԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Բիւզանդական կայսրութեան մէջ հայերու գինուորական եւ քաղաքական ազդեցութիւնը շեշտուեցաւ Հերակլիոս կայսեր զահակալութեանն ետք, երբ ստեղծուեցաւ Արմենիաքոյ բանակաթեմը, հայ գինուորականներ ու պաշտօնատարներ պատասխանատու պաշտօններ ստանձնեցին պալատին եւ բանակին մէջ եւ ազդու դերակատարութիւն ստանձնեցին պետական կառոյցներէն ներս:

ՓՈԿԱՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԸ

Մորիկ կայսեր ղէմ ըմբոստացած բանակին գլուխը անցած Փոկաս, կայսրը տապալելէ եւ ընտանիքով բնաջնջելէ ետք (602ին), ինքզինք կայսր հռչակեց:

Փոկաս քաղաքական նեցուկ ապահովելու համար լաւ յարաբերութիւն հաստատեց Հոռոմի Գրիգոր Ա. պապին հետ, իսկ աւարներուն հետ խաղաղութեան դաշինք կնքեց՝ անոնց բնակատեղի տարեկան բարձր տուրք վճարել, սակայն աւարներ շարունակեցին իրենց արշաւանքները:

Մորիկի սպանութիւնը պատրուակ բռնելով արքայից արքայ խոստով Բ. 604ին Բիւզանդիոնի ղէմ պատերազմի ձեռնարկեց, իբրեւ թէ իր «հօր» սպանութեան վրէժը լուծելու համար Փոկասէն, որովհետեւ Մորիկն էր, որ զինք Տիգրանի գահին բարձրացուցած էր:

Պարսկական բանակը պատերազմի առաջին օրերուն իսկ խորտակեց բիւզանդական սահմանապահ զօրքերուն ղրմադրութիւնը եւ ներխուժեց Հայաստանի կեդրոնական նահանգներ, որոնք պատերազմի թատերաբեմ դարձան եւ մեծ աւերածութիւններու ենթարկուեցան: խոստով իր գլխաւոր հարուածը ուղղեց Տարս բերդին դէմ, որ պաշարուեցաւ եւ 606ին գրաւուեցաւ: Պատերազմը այնուհետեւ աւելի սաստկացաւ Հայաստանի եւ Ասորիքի մէջ: Բիւզանդական բանակի Արեւելքի հրամանատար հայազգի Ներսէս զօրավար, ինքզինք Մորիկի գաւազնը անուանող թէնդորոսը (թէ եւ Մորիկի ընտանիքէն ոչ ոք ազատած էր) իբրեւ պատուիրակ խոստովի մօտ ուղարկած ըլլալուն համար ձերբակալուեցաւ եւ խողովորուեցաւ Փոկասի հրամանով: Մինչեւ 608 պարսիկներ գրաւեցին ամբողջ Հայաստանը: Մորիկի հաստատած հայ քաղկեդոնական կաթողիկոսութիւնը չքացաւ:

Ներքին ճակատի վրայ Փոկաս դարձաւ անսանձ ռուսակալ մը, անխնայ հայածեց եւ ջարդերով ձեռնարկեց իր մրցակիցներուն, միաբնակներուն եւ հրեաներուն դէմ:

ՓՈԿԱՍԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ ԿԱՅՆՈՒՄԸ

Փոկասի ռուսակալ, ըրթամիտ եւ անընդունակ վարչակարգին պատճառով կայսրութիւնը մնացած էր անպաշտպան՝ արտաքին թշնամիներու դէմ, իսկ ներքին ճակատի վրայ սակայն շարժում արեան մէջ խեղդուած էր: Պետութեան շարժում օրհասէ փրկելու համար խուճուք մը գինուորականներ, կայսեր փեսայ Պրիսկոս զօրավարին ղեկավարութեամբ, միացան եւ որոշեցին տապալել Փոկասը:

Մակայն դաւադրութիւնը իրականացնելու համար անհրաժեշտ էր Ափրիկէի կուսակալ հայազգի Հերակլիոս (կամ Հերակլ) պատրիկի եւ անոր զաւակին՝ Յլաւիոս Հերակլիոսի զինուորական աջակցութիւնը, որովհետեւ անոնք ստուար բանակ է նաւատորմ ունէին իրենց հրամանատարութեան տակ, հետու էին կայսեր հեղինակութեանն եւ անոնց ձեռքերուն մէջ կը գտնուէր մայրաքաղաքին հաց մատակարարող Եգիպտոսը:

Պրիսկոս բանակցութեան մէջ մտաւ Հերակլիոս պատրիկի հետ, որ համաձայն գտնուեցաւ Պոլիս ուղարկելու իր նաւատորմը՝ Փոկասը գահընկէց ընելու համար:

Երբեքն Հերակլ կարթագէնի մէջ վարչապետ Երեմիայի ղեկավարութեամբ նաւատորմի ղր, որ տարեկան բերքը Պոլիս պիտի փոխադրէր, եւ յետոյ եգիպտական (ափրիկեան) նաւատորմի ղր անոր զաւակին՝ Հերակլիոսի հրամանատարութեան տակ քալեց Պոլսով վրայ: Իսկ պատրիկին Գրիգոր եղբոր զաւակը՝ Նիկիտաս ցամաքի ճամբով քալեց Եգիպտոսի վրայ, գրաւեց Աղեքսանդրիան, այնուհետեւ՝ Պաղեստինը եւ Սուրիոյ վրայով շարժեցաւ դէպի Պոլիս:

Հերակլիոս իր նաւատորմի ղրով 5 Հոկտեմբեր 610ին ուղղակի Պոլիս ցամաք ելաւ: Փոկաս ոչ մէկ միջոցի ղրմեց ինքզինք պաշտպանելու համար: Դաւադիրները մտան պալատ եւ ձերբակալեցին զայն, բայց կատաղած ամբոխը վրայ հասնելով բռնեց կայսրը եւ հրապարակի վրայ այրեց:

ՀԵՐԱԿԼԻՈՍ ԿԱՅՍՐ. ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԵՎ ԵՎԼՈՒԹԵԱՆ

Փոկասը տապալող ղրխաւոր ուժը՝ երիտասարդ Հերակլիոս ձեռք առաւ իշխանութիւնը եւ ինքզինք կայսր հռչակեց: Ան ծնած էր մօտաւորապէս 575ին, կապաղովկիա: Բիւզանդական եւ այլ աղբիւրներու մէջ յիշուած է, որ՝ «անոր հայրը հաւանաբար հայկական ծագում ունէր»: Ան նկարագրուած է իբրեւ դեղձան մագբոցով եւ սեւ աչքերով: Ամուսնացած էր Եւզոպիայի հետ, որ սակայն մահացաւ 612ին, որմէ ետք ան ամուսնացաւ եղբոր դստեր՝ Մարիամի հետ:

Հերակլիոս կը ժառանգէր ղէպի անդունդ

ԲԻԶԱՆԴԻՈՆԻ ԵՐԱԿԼԻՈՍ ԿԱՅՍԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԾՔԱՆԻՆ

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐ ԿԱՅՍԵՐ ԳԼԽԱՒՈՐ ՆԵՑՈՒԿԸ ԵՒ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐ՝ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶՕՐԱԳՈՒՆԴԻ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄ



Երակլիոս կայսր

գահավիժող կայսրութիւն մը, որ այդ օրերուն հիւսիսէն եւ արեւմուտքէն անխնայ աւերածութիւններու կ'ենթարկուէր թրքացեղ աւարներուն կողմէ, որոնք Տոն գետի ափերէն մինչեւ Ալպեան լեռներ տարածուող շրջանները իրենց տիրապետութեան ենթարկած էին, իսկ արեւելեան ճակատի վրայ պարսիկներ կը շարունակէին յառաջանալ:

Հերակլիոս փորձեց բանակցութեան մէջ մտնել խոստով Բ.ի հետ, բայց՝ ապարդիւն: Պարսիկներ 611ին գրաւեցին ամբողջ Ասորիքը եւ անոր մայրաքաղաքը՝ Անտիոքը, 612ին՝ Փոքր Ասիան, 613ին՝ Դամասկոսը, մտան Պաղեստին եւ 614ին, քանի մը շարժուան կռիւներէ ետք գրաւեցին Երուսաղէմը, անխնայ թալանեցին եւ աւերեցին Սուրբ Քաղաքը եւ անոր բնակչութիւնը կոտորեցին տասնեակ հազարներով: Պարսիկները իրենց հետ տարին Չաքարիա պատրիարքը եւ Քրիստոսի խաչափայտը: Երուսաղէմի անկումը մեծ անդրադարձ ունեցաւ քրիստոնեայ աշխարհին համար:

Պարսիկներ 616ին մտան Ափրիկէ եւ նուաճեցին Եգիպտոսն ու Լիպիան, իսկ 617ին գրաւեցին Քաղկեդոնը՝ Վուսիորի արեւելեան՝ ասիական ափին: Պոլսոյ անկումը այլեւս կը նկատուէր անխուսափելի:

Ստեղծուած ճգնաժամային կացութեան առջեւ Հերակլիոս կրկին անգամ փորձեց բանակցութեան մէջ մտնել արքայից արքային հետ եւ որոշեց աթոռը Կարթագէն փոխադրել: քանի մը նաւեր, պարտաական գանձերով բեռնաւորուած՝ ճամբայ ելան, բայց փոթորիկի բռնուեցան եւ բոլորն ալ խորտակուեցան:

Յուսահատական այս կացութեան մէջ յուսնաջ Սերգիոս (Սարգիս) պատրիարք յորդորեց կայսրը՝ հրաժարի կարթագէն փոխադրման օգտին: Հերակլիոս փոխեց իր ընթացքը եւ ամբողջ ուժը կեդրոնացուց Պարսկաստանի դէմ պատերազմին: 619ին հիւսիսի աւարներուն եւ սլաւոններուն հետ թրակիոյ Հերակլիա աւանին մէջ ժամացուցեց՝ բանակցութեւ, բայց հաջիւ հասած, աւարները փորձեցին կալանաւորել զինք: Հերակլիոս ձին հեծաւ եւ քառամբակ փախաւ Պոլիս: Բայց յետոյ կողմերը հաշտութիւն կնքեցին կայսրը առատորէն կաշառեց գանձեր, որպէսզի հանգիստ ձգէ զինք: Պատերազմի կոչերը կրօնական բնոյթ ստացան եւ հոգեւորականները առաջնորդող ուժ դարձան, իսկ Քրիստոսի խաչափայտը ազատելու համար եկեղեցիները բացին իրենց գանձերը:

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐ ՈՒ ԶՕՐԱԳՈՒՆԴԻ ԿԱՅՍԵՐ ԱՃԱԿԻՑՆԵՐԸ

Հերակլիոս կայսր աշխուժօրէն լծուեցաւ բանակի վերակազմութեան աշխատանքին եւ կռուելու ատակ բոլոր տղամարդիկը զէնքի տակ կանչուեցան: կազմուեցան երեք մեծ զօրագունդեր. Օփսիքիոնի (պահակներ), Արմենիաքոյ (հայեր) եւ Անաթոլիոյ (փոքր ասիացիներ): Ետքը մը հը հայ գինուորականներ հրամանատարական պատասխանատու պաշտօններու կոչուեցան եւ կայսեր գլխաւոր նեցուկը դարձան: Բարձրաստիճան զօրավար Վաղենտինոս Արշակունի կամ Վաղենտին պատրիկ (որ բիւզանդական պատմութեան մէջ ճանչցուած է Վաղենտինոս Հայ անունով) պահակագունդի հրամանատար հռչակուեցաւ: Մեծ գանձեր Արմենիաքոյ զօրագունդին հրամանատարութիւնը ստանձնեց: Մանուէլ Արշակունի, որ ճանչցուած էր իբրեւ «այր առաքինի», զօրավար հռչակուեցաւ (անոր դստեր հետ ամուսնացած էր Վարդգատիրոց Բագրատունիի զաւակը՝ Սմբատ): Վահան խորխուրունի եւ այլ իշխաններ եւս բանակին մէջ առնուեցան՝ իբրեւ հրամանատարներ:

Հերակլիոս 622ին սկսաւ Պարսկաստանի դէմ պատերազմին. վեց ամուսու ընթացքին վերանուաճեց Փոքր Ասիան եւ աշնան մտաւ Կապաղովկիա, ուր ձմեռն անցրեց իր քանակը մեծ կորուստներու ենթարկուեցաւ: Ապա բիւզանդական բանակը մտաւ Հայաստան: 623ի Ջատիկն բիւզանդական բանակը, Մեծ Գնունիի, Վահան խորխուրունի եւ այլոց հրամանատարութեան տակ սկսաւ երկրորդ արշաւանքին եւ հասաւ Սարոս գետին ափերը: պարսիկներ խուճապահար սկսան փախուստի դիմել, բայց բիւզանդացի փակեցին կամուրջը եւ սաստիկ ջարդ մը տուին անոնց: Մինչեւ 625 բիւզանդացիք գրաւեցին Հայաստանը, մտան Կոպկաս, Ատրպատական եւ Ասորիք, որմէ ետք Հերակլիոս սաստկացուց պատերազմական գործողութիւնները:

Նոյն օրերուն հայ գինուորականներ կայսրութեան տարբեր երկրամասերու կառավարիչներ նշանակուեցան. Իսահակ Հայկազ իտալիոյ փոխարքայ, Վահան Մամիկոնեան

Աղեքսանդրիոյ կառավարիչ՝ օգոստոս տիտղոսով, իսկ կայսեր հօրեղբայրը՝ Գրիգոր՝ Ափրիկէի փոխարքայ:

ՊՈԼՍԱՅ ԵՎ ԵՎԼՈՒԹԵԱՆ

Մինչ բիւզանդական բանակը փայլուն յաղթանակներ կ'արձանագրէր արեւելեան ճակատներուն վրայ, անդին Պաղեստիններու մէջ, նոյն օրերուն՝ 626ին աւարներուն խաբանը, իրեն հպատակ սլաւոններուն հետ, երեք հարիւր հազարնոց բանակով մը քալեց մայրաքաղաքին վրայ. խաբանը վճռով էր ամէն գնով նուաճել Պոլիսը եւ տիրանալ անոր անբաւ հարստութեան: Ան փայտէ աշտարակներ շինել տուաւ մայրաքաղաքի պարսպներուն հաւասար, որպէսզի կարենայ մտնենալ անոնց եւ գրոհ տալ պարսպներէն ներս: Պարսկական գունդեր, որոնք կը մնային Վուսիորի ափերուն, Պոլսոյ պարսպներուն մօտ միացան աւարներուն:

Ստեղծուած ճգնաժամային կացութեան դիմաց մայրաքաղաքին բոլոր բնակիչները միացան եւ տենդազին լծուեցան ինքնապաշտպանութեան: Սերգիոս պատրիարքը եւ հոգեւորականներ մեկնեցան պարսպները պաշտպանող զօրքին մօտ: կալիստիոս հնարեց «ծովային կրակը»՝ ծծումբէ, կուպրէ եւ քարիւղ բաղկացած, որ հրդեհեց փայտէ շինութիւնները, որմէ ետք պոլսեցիք գիշերային մեծ յարձակումով մը քակեցին պաշարման շղթան: Աւարներու հսկայ բանակը ցիր ու ցան սկսաւ փախուստ տալ: Պարսիկները չկարողացան օգնութեան հասնիլ անոնց, որովհետեւ բիւզանդական նաւատորմը արդէն պաշտպանողական ուժեղ շղթայ կազմած էր մայրաքաղաքին շուրջ: Սլաւոններու նաւակները, որոնք արեւմուտքէն կողմէ պատերազմի թերուած էին, բոլորն ալ խորտակուեցան:

Պոլսեցիք իրենց յաղթանակը տօնեցին մեծաշուք հանդիսաւորութեամբ. դպիրներ այդ օր երգեցին Ռոմանոսի «Աքաթիսթոս»ը, իսկ ժողովուրդը «Ալելուիա»ի փոխառութեամբ հետեւեցաւ արարողութեան: Օրհներգը մինչեւ հիմա յունական եկեղեցիներուն մէջ կ'երգուի Մեծ Պահոց շրջանին, իբրեւ յիշատակ այդ օրուան:

Պարտուած աւարները այլեւս չլինակահանեցան իբրեւ գինուորական ուժ եւ պատմութեան թատերաբեմէն անհետացան, իսկ Սեւ ծովու ափերէն Պալքասներ թափանցեցին պուլկարներ, սլաւներ՝ Մամոյի հրամանատարութեան տակ, ինչպէս նաեւ՝ սերպեր եւ խրուածքներ, որոնք Հերակլիոս սնակեցուց հիւսիս - արեւմտեան Պալքասներուն մէջ եւ քրիստոնէացուց գանձերը:

ՀԵՐԱԿԼԻՈՍ ԵՎ ԵՎԼՈՒԹԵԱՆ ՄԺԵՏ ԳՆՈՒՆԻՒ ԱՐԵՒԵԼՔԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

Հերակլիոս 627ին կրկին անգամ յարձակեցաւ Սասանեան կայսրութեան վրայ. անձնապէս առաջնորդելով յոյներէ եւ հայերէ բաղկացած իր բանակը՝ Հայկական բարձրաւանդակէն իջաւ Տիգրիսի հովիտը, ուր հանդիպեցաւ պարսկական բանակին: Դճուական ճակատամարտ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 12ին, Նինուէի մօտ. Հերակլիոս, ձիուն վրայ հեծած, քաղաքը կռուեցաւ, աջ ու ձախ ջարդեց եւ սպանեց պարսիկ երեք զօրավարներ եւ այլ հրամանատար մը: Պարսկական բանակը ջախջախեցաւ եւ խոստով Բ. Տիգրանէն փախաւ դէպի իր Դաստակերտ դղեակը: Ամիս մը ետք, 628 Յունուարին Հերակլիոս մտաւ Դաստակերտ: խոստով գահընկէց հռչակուեցաւ եւ սպանուեցաւ եւ զաւակը՝ Կաւատ գահ բարձրացաւ, որմէ ետք Հերակլիոսի եւ Կաւատի միջեւ հարստութիւններ տայով անոր: Մեծե՛տ, որ արդէն մեծ հեղինակութիւն էր բանակին մէջ, պետութեան ղեկավար ղէմքերէն դարձաւ եւ այնքան ազդեցութիւն ձեռք ձգեց, որ միջամտութիւններ կատարեց Պարսկաստանի ներքին գործերուն, յատկապէս՝ պարսկական տիրապետութեան տակ գտնուող հայաբնակ շրջաններու խնդիրներուն:

Հերակլիոս 630ին Երուսաղէմ գնաց եւ անձնապէս խաչափայտը հաստատեց Սուրբ Երիւմին մէջ:

ՆՈՐ ՎԵՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՆ

Հերակլիոս կայսր միարնակ եւ երկարնակ եկեղեցիները կամրջելու նպատակով Սերգիոս

պատրիարքին եւ թէնդորոս Փառանայի եպիսկոպոսին հետ ստեղծեց միակամութեան վարդապետութիւնը, որուն համաձայն, Յիսուս մէկ կամք եւ մէկ ներգործութիւն ունի:

Նոր վարդապետութիւնը ընդհանրական դարձնելու համար Կարնոյ մէջ գումարուեցաւ եկեղեցական ժողով մը, որուն հայոց կողմէ մասնակցեցան Եգր Ա. Փառաժնակեբոսցի կաթողիկոս եւ այլ հոգեւորականներ: Անոնք ընդունեցին նոր վարդապետութիւնը, բայց շարունակեցին հայ եկեղեցւոյ ծէսերով առաջնորդուիլ: Սակայն Արեւելեան Հայաստանի հոգեւորականները մերժեցին միանալ միակամութեան:

ՎԱՀԱՆ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ ՀՐԱՄԱՆԱՍԱՐ ԱՐԱՔԱԿԱՆ ԵՎ ԵՎԼՈՒԹԵԱՆ ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ

634ին սկսան արաբական արշաւանքները: Հերակլիոս կայսր անոնց դէմ ղրկեց Աղեքսանդրիոյ բերեմնի կառավարիչը՝ Վահան Մամիկոնեանը, անոր օգնական տալով Տրիթուրիոսը: Սակայն բիւզանդական բանակը ձանր կորուստներու ենթարկուեցաւ եւ նահանջեց դէպի Դամասկոս, որ 635ին պաշարուեցաւ արաբներուն կողմէ: Վահան Մամիկոնեան Դամասկոսի մէջ պաշարուած բիւզանդական զօրքերուն կողմէ ողջունուեցաւ իբրեւ կայսր: Նոյն օրերուն անոր զաւակը Եմեսիոյ (Հոմս) բիւզանդական զօրագունդերուն հրամանատարն էր:

Վահան բաւականաչափ ուժ ունէր դիմադրելու, բայց իրեն ստորագաւ մէկ պաշտօնատարին՝ Մանսուրի խաղաղաւանքին պատճառով ծանր պարտութիւն կրեց արաբներէն: Բիւզանդական բանակը քայքայուեցաւ եւ Վահան փախաւ ու գնաց Սինա, ուր յունական հռչակաւոր Սուրբ Կատարինէ մենաստանին մէջ վանակալ դարձաւ Անաստաս անուանով: Ան հոն Դաւիթի վեցերորդ Սաղմոսին մեկնութիւնը գրեց եւ Երուսաղէմի հայ վանքերուն ցուցակը պատրաստեց:

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՊՍՏԱՄԱՐՈՒԹԻՆ. ՄԺԵՏ ԳՆՈՒՆԻՒ ԿԱՅՍԵՐ ՊԱՇՏՊԱՆ

Հայաստանի պարսկական ռաժիմի մարզպան Վարդգտիրոց Բագրատունի, Ատրպատականի նախկին մարզպան խորխուր Որմիզդի եւ անոր զաւակին ու յաջորդին՝ Ռոստոմի դաւաճանութեան պատճառով իր պաշտօնը ձգեց եւ անցաւ Բիւզանդիոն, ուր պատիւներով ընդունուեցաւ կայսրի կողմէ, որ անոր ապաւանք եւ գանձեր նուիրեց: Իսկ զաւակը՝ Սմբատ կայսերական սենեկապետ նշանակուեցաւ:

Նոյն օրերուն, 635ին, արքունիքին մէջ մեծ ազդեցութիւն ունեցող եւ կայսրը վստահութիւնը վայելող Վահան խորխուրունի եւ Դաւիթ Սահառունի, որոնց միացան Սմբատ Բագրատունի եւ ուրիշ քանի մը պալատականներ, դաւադրութիւն մը կազմակերպեցին կայսրը ղէմ՝ գայն տապալելու համար եւ զօրք իջեցուցին, սակայն Մեծ Գնունի իրեն հաւատարիմ ուժերուն գլուխը անցած՝ ճնշեց դաւադիրները, որոնք ձերբակալուեցան: կայսրը խնայեց անոնց կեանքը եւ աքսորեց գանձեր. Սմբատ Բագրատունի եւ Վահան խորխուրունի Ափրիկէ քրուեցան: Բայց յետոյ քանի մը հայ գինուորականներ Դաւիթ Սահառունիի գլխաւորութեամբ վրէժ լուծեցին Մեծ Գնունիէն եւ սպանեցին զայն:

Նոյն ժամանակ Մակեդոնիա հաստատուած հայերը կայսեր հրամանով Նիգիէն փոխադրեցին քաղաքը տեղափոխուեցան:

ՎԱՀԱՆ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ ԵՎ ԵՎԼՈՒԹԵԱՆ ԵՐԱՄՈՒԹԻ ՀԵՐՈՍԸ. ՎԵՐՋ ՀԵՐԱԿԼԻՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ


Բիւզանդական եւ արաբական բանակներուն միջեւ հարիւրէ աւելի ճակատամարտեր մղուած էին արդէն, երբ 636ին Հերակլիոս Սինոյի վանքէն վերստին պաշտօնի կանչեց զօրավար Վահան Մամիկոնեանը՝ անոր յանձնելով մեծ եւ կարեւոր մասամբ հայերէ բաղկացած բանակ մը՝ դիմակալելու համար արաբական յառաջնորդացըր:

Եւրոպ գետի ափին տեղի ունեցած արիւնահեղ ճակատամարտին կայսերական բանակը համարեա ընդունուեցաւ եւ Վ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ ԳՈՒՄԱՐԵՅ ԻՐ ԸՆԹԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՏՈՒՄԱՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը, շաբաթապահից իր գումարած ժողովին վաւերացնելէ ետք 10րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, յայտարարեց մարզիկներուն անունները, որոնք ստացան իրենց երրորդ դերին քարտը եւ պիտի բացակային շաբաթավերջին տեղի ունենալիք մրցումներէն (11րդ հանգրուան): Անոնք են. Սեւակ Ղազարեան (Հ.Մ.Մ.) եւ Ներսէս Պէրպէրեան (Հ.Մ.Ը.Մ.): Իսկ Անսարի մարզիկ Մոհամէտ Մաթար կը կախակալուի երկու մրցումով, իր ստացած կարծիք քարտին պատճառով:

Ֆետերասիոնը երեքական միլիոն լիբանանեան ոսկի տուգանքի ենթարկեց Թատամոն Սուրբ եւ Սալամը, որոնց համակիրները հայհոյած էին իրաւարարին: Հ.Մ.Մ. եւս նոյն պատճառով տուգանքի ենթարկուեցաւ, սակայն երկու միլիոնով:

Իր գումարած վերջին ժողովին, ֆետերասիոնը յայտնած էր, թէ Սալամ եւ Թատամոն Սուրբ մէկական միլիոն լիբանանեան ոսկի տուգանքի կ'ենթարկուին, իրենց համակիրներուն պատճառով, որոնք հայհոյած էին օրուան իրաւարարին: Ֆետերասիոնը կը յայտնէ, թէ տեղի ունեցած է թիւրիմացութիւն մը, որովհետեւ անոնց ստացած պատիժը մէկական միլիոն չէ, այլ՝ երկուական միլիոն:

Շաբաթավերջին տեղի կ'ունենան 11րդ հանգրուանի մրցումները: Յաւանաբար կիրակի, 10 Փետրուարին, տեղի կ'ունենան 13րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումները:

Ստորեւ՝ երթի վերջին երեք հանգրուաններուն յայտարարեց (կարգ մը մրցումներուն ժամերը կրած են փոփոխութիւն, ուղղակիօրէն պատկերասփռուող մրցումներուն պատճառով):

11րդ ՀԱՆԳՐՈՒԱՆ		ԺԱՄ ԴԱՇՏ	
Հ.Մ.Մ. - Ալիս Ալէյ	2:30ից	Պ. Համուտ	
Ռասիմկ - Պըրժ	2:30ից	Ժուճիէ	
Թ. Սուր - Ահու	2:30ից	Սուր	
Սաֆա - Սաթէ	4:45ից	Պէյրուք	
ԿԻՐԱԿԻ. 3 ՓԵՏՐՈՒԱՐ			
Ահիլ Սալամ - Հ.Մ.Ը.Մ.	2:30ից	Սուր	
Շ. Սահէլ - Մալիք	2:30ից	Պէյրուք	
Նըժմէ - Անսար	4:45ից	Մ. Աւան	

12րդ ՀԱՆԳՐՈՒԱՆ		ԺՈՂՈՎԱՐՔԻ 6 ՓԵՏՐՈՒԱՐ	
Ռասիմկ - Հ.Մ.Մ.	2:30ից	Ժուճիէ	
Սաֆա - Հ.Մ.Մ.	2:30ից	Սաֆա	
Ախա Ալէյ - Ահիլ Սալամ	2:30ից	Մ. Աւան	
Անսար - Պըրժ	4:45ից	Պէյրուք	
ԿԻՐԱԿԻ. 3 ՓԵՏՐՈՒԱՐ			
Սաթէ - Սալամ	2:30ից	Պ. Համուտ	
Թ. Սուր - Հ.Մ.Ը.Մ.	2:30ից	Սուր	
Պըրժ - Շ. Սահէլ	2:30ից	Պ. Աւան	
Ահու - Նըժմէ	4:45ից	Պէյրուք	

13րդ ՀԱՆԳՐՈՒԱՆ		ԺՈՂՈՎԱՐՔԻ 9 ՓԵՏՐՈՒԱՐ	
Ահիլ Սալամ - Հ.Մ.Մ.	2:30ից	Սուր	
Անսար - Ռասիմկ	2:30ից	Պէյրուք	
Սաֆա - Ախա Ալէյ	4:45ից	Մ. Աւան	
ԿԻՐԱԿԻ. 10 ՓԵՏՐՈՒԱՐ			
Սաթէ - Սալամ	2:30ից	Պ. Համուտ	
Թ. Սուր - Հ.Մ.Ը.Մ.	2:30ից	Սուր	
Պըրժ - Շ. Սահէլ	2:30ից	Պ. Աւան	
Ահու - Նըժմէ	4:45ից	Պէյրուք	

ԿՈՓԱՍԱՐՏ

ԼՈՒԻՍ - ԹԱՅԱՐԸ ԳԱԳԱԹԻ ԶԱԿԱՏՈՒՄԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԻ ԾՇԴՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆԻՆ՝ 6 ԱՊՐԻԼԻՆ

Աշխարհի կոփամարտի ֆետերասիոնը երէկ յայտարարեց, թէ նախօրոք որոշուած թուականին տեղի պիտի ունենայ աշխարհի ծախքի շարքի ախտաբանութեան տիտղոսին գծով մրցումը հսկաներ Մայք Թայլընի եւ Լիւնքս Լուիսի միջեւ, նոյնիսկ եթէ Նեւտա նահանգի մարմինները ամերիկացի Թայլընի արտօնագիր չտան: Ապրիլ 6ին, Լուս Վեկասի մէջ տեղի ունենալիք Թայլընի - Լուիս ճակատումը կոփամարտի պատմութեան մէջ կը նկատուի բոլոր ժամանակներու մեծագոյն ճակատումներէն մէկը, հետեւաբար այս մէկը նկատի առնելով, ոչ ոք կը փափարքի անոր ջնջումը կամ նոյնիսկ յետաձգումը:

Բրիտանացի Լուիս եւս մեծապէս խանդավառ է այս ճակատումով: Ան «Միլըր» օրաթերթին հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին կ'ըսէ. «Անհաբեր կը սպասեմ այդ թուականը, որովհետեւ Իվանտըր Հոլիֆիլսը պարտութեան մատնելէս ետք (1999ին), անհամբեր եմ Թայլընի դէմ ճակատումին»:

Աշխարհի կոփամարտի ֆետերասիոնին նախագիւղ՝ Խոսէ Սիլվայան մամլոյ ասուլիսի մը ընթացքին կը յայտարարէ, թէ եթէ պատահի, որ Նեւտայի նահանգը 36 տարեկան Թայլընի արտօնագիր չտայ, այդ ճակատումը տեղի պիտի ունենայ այլ նահանգի մը մէջ:

«ՓՐՈՍՊ» ՍՆԱԿԱՍՈՒՄ ԸՆԿՈՒՄԵՆՏԱԿ

Ալէն Փրոսպ Ֆորմիլա իր խումբը պաշտօնապէս սնանկացած հռչակեց: «Ասիական անկնկալ մը չէր: Յաջողեցանք կերտել լաւ խումբ մը, յաւազոյնը՝ կը կարծեմ: Սակայն, նիւթական դժուարութիւնները պատճառ դարձան, որ սնանկանանք», յայտնեց չորս անգամ աշխարհի ախոյեան հանդիսացած Փրոսպ, որ 1997ին խումբը գնած էր Լիւիզիէն:

Վերջին տարիներուն խումբին արձանագրած ձախող արդիւնքները պատճառ դարձան, որ «Փրոսպ»

28 միլիոն տոլարի պարտքերու մէջ ընկղմուի: Վստահաբար, որ «Փրոսպ»ի սնանկացումը մեծ հարուած մըն է Ֆրանսայի, սակայն Ալէն Փրոսպ կը յայտնէ, թէ օրին մէկը խումբը դարձեալ պիտի վերադառնայ Ֆորմիլա ի աշխարհ, բայց ոչ՝ Ֆրանսայի մէջ:

Ֆորմիլա ի 2002ի աշխարհի ախոյեանութեան, որուն առաջին կրան փրին տեղի պիտի ունենայ Մեյպուրնի մէջ (Աւստրալիա) Մարտ 3ին, ներկայ պիտի ըլլան 11

խումբեր, որովհետեւ «Թոյրօս» առաջին անգամ ըլլալով իր մասնակցութիւնը պիտի բերէ աշխարհի ախոյեանութեան: «Փրոսպ»ի սնանկացումը պատճառ պիտի դառնայ 300 պաշտօնականերու գործէ արձակման, մինչ անոր վարորդը՝ գերմանացի Հայնց - Հարալտ Ֆրեյնցը շատ հաւասար միանայ «Արոյ»ի:

83 անգամ իր մասնակցութիւնը բերած Ֆորմիլա ի կրան փրիններուն, «Փրոսպ» ոչ մէկ անգամ կրցած է հանդիսանալ առաջին: Անցեալ եղանակին, անիկա հանդիսացաւ 9րդ, հաւաքելով միայն չորս կէտ: Իսկ 2000ին, անիկա առանց կէտի հանդիսացաւ վերջին:

Ալէն Փրոսպ, սակայն, իբրեւ վարորդ (վստահաբար այլ խումբերու հետ) իր մասնակցութիւնը բերած է 199 կրան փրիններուն, շահելով 51 մրցում:

ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱԺԷՍ ՅԱՂԹԵՅ ԱՆՆԻՊԱԼԻ՝ 69 - 67

Լիբանանի պասքեթբոլի ախոյեանութեան ֆայնլը սիքսթ մրցումներուն, երէկ տեղի ունեցան երկու ճակատումներ, որոնց ընթացքին Սաթէս եւ Շանվիլ յաղթանակներ արձանագրեցին: Սաթէս արձանագրեց յաջողական իր երրորդ յաղթանակը. ան Ջահէի մէջ 69 - 67 արդիւնքով պարտութեան մատնեց Անիպալը: Այս վերջինը կը կրէր իր երկրորդ պարտութիւնը:

Այսօր, ժամը 20:30ին, Մանարայի մէջ Ռիատի կը հերթընկալէ Սաաբան:

ՔՐՈՍ ԲԱՆՈՒՆԹՐԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԹԼԵԹԻԶՄԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԻՒՆ

Լիբանանի արեւելքի քրոս բանորիի ախոյեանութեան, որ փետրուարին կ'ընթացի 27 Յունուար 2002, ժամը 9:30ին, ժամհորի դաշտին վրայ, 1987-1988ի ծնունդի ցուց մէջ Բ. հանդիսացած է Արիսար Պոյաճեան:

ԺՈՐԺ ՈՒԷՍ ԼՔԵՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԱՐԷՉԸ

Ժորժ Ուէս, որ միակ ամերիկացին ըլլալով ընտրուած է աշխարհի եւ Եւրոպայի լաւագոյն ֆուտբոլիստը, շաբաթականից լեզու միջազգային ասպարէզը, երբ անոր կազմը՝ Լիպերիոն, 1 - 0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Նիկերիայէն՝ Մալիի մէջ տեղի ունեցող ամերիկեան ազգային խումբերու բաժակի մրցումներուն եւ դուրս մնաց մրցաշարէն:

35 տարեկան Ուէս, ազգային խումբը լեզուով, ըսաւ, թէ կ'ուզէ իր ընտանիքին յաւանալ ժամանակ տրամադրել, թէ եւ ան միջազգային ասպարէզը լեզուով հետոյ չէ կանայ դաշտերէն: Ան այժմ մաս կը կազմէ Ժազիրա խումբին (Արաբական Միացեալ Էմիրութիւններ), վեցամիս Մարսէլի շապիկը կրելէ եւ Ֆրանսայէն հեռանալէ ետք:

Ուէսայի Ափրիկէէն դուրս գալուն պատճառը եղած է Արսէն Վենկէր, որ 1988ին իր կազմին՝ Մոնաքոյի միացուցած է զայն, որ յաջորդ տարի Ափրիկէի տարուան լաւագոյն ֆուտբոլիստը ընտրուած էր: Ան ապա մաս կազմած է Փարիզ Ան Տերտէրի, Ա. Սէ. Միլանի, Չելսիի եւ Մանչեսթըր Սիթիի, նախքան Մարսէլի փոխանցումը: 1995ին, ան երկրորդ անգամ ըլլալով փրացած է Ափրիկէի տարուան լաւագոյն ֆուտբոլիստի տիտղոսին, նոյն տարին նաեւ շահելով Եւրոպայի եւ աշխարհի լաւագոյն ֆուտբոլիստի տիտղոսները:

ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐԲ ԿԻՍԱԽԱՐՏԱԿԱՆ ԶԱԿԱՏՈՒՄՆԵՐ

Սպանիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարքին (ծանօթ՝ Թագաւորի բաժակի մրցաշարք անունով), կիսաարտականի դարձի մրցումը այսօր իրարու դէմ կը հանէ Տեֆորթիւ Գորուան եւ Գ. դասակարգին մաս կազմող Ֆիկուերթսը: Կիսաարտականի երկրորդ մրցումը, որ տեղի պիտի ունենայ վաղը՝ Հինգշաբթի, Ռէալ Մատրիտի եւ Աթլետիքո Պիլպոյի միջեւ (ժամը 22:30ին)՝ Պէյրուի ժամով, կը սպասուի ըլլալ աւելի հետաքրքրական եւ տաք: Այսօրուան մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 22:15ին:

Հակառակ անոր որ Ֆիկուերթս երթին իր դաշտին վրայ 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Լա Բորուանայէն, սակայն խումբին մարզիչ Փերէ Կրաթաբոս յոյսով է, որ իր կազմը կրնայ ապահովել աւարական մրցումին իր տոմար, նկատի առնելով մարզիչ Խաւիէ Իրուրեթայի կազմին վերջերս արձանագրած ձախող արդիւնքները:

Յամենայդէպ, Ֆիկուերթս նոյնիսկ եթէ դուրս մնայ մրցաշարքէն, Սպանիոյ ֆուտբոլի պատմութեան մէջ մեծ իրազդութեամբ մը կատարեց, հանդիսանալով Գ. դասակարգին մաս կազմող առաջին խումբը, որ հասաւ կիսաարտականի հանգրուան:

Վաղը տեղի ունենալիք մրցումը Ռէալ Մատրիտի համար պիտի ըլլայ կարեւոր, որովհետեւ անիկա երթին 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Աթլետիքո Պիլպոյի դաշտին վրայ: Պիլպոյի համար աւարտական մրցումին տոմար ապահովելը եւ վստահաբար բաժակին տիրանալը պիտի ըլլայ շատ կարեւոր, որովհետեւ անիկա այս տարի կը տոնէ ֆուտբոլի իր հիմնադրութեան 100րդ տարեդարձը եւ կ'ուզէ անպայման այդ իրազդութեամբ կատարել, մանաւանդ որ անիկա վերջին անգամ Սպանիոյ բաժակը բարձրացուցած է 18 տարի առաջ:

Նշենք, թէ աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ Մարտ 6ին, «Սանթիակո Պետրոպոլ»ի մէջ: ●ՇԱԲԱԹԱՎԵՐՋԻՆ տեղի կ'ունենան Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 23րդ հանգրուանի մրցումները՝ հետեւեալ յայտարարին հիմամբ: ●ՇԱԲԱԹ, 2 ՓԵՏՐՈՒԱՐ Տեֆորթիւ Գորուան - Ալաւես Ռայո Վալեքան - Սելիլա Մայորա - Սելիա Վիլո Ռէալ Սոսիեդադ - Վիարեալ Թեթերիֆէ - Պարսելոնա ●ԿԻՐԱԿԻ, 3 ՓԵՏՐՈՒԱՐ Էսփանիոլ - Ռէալ Մատրիտ Մալիա - Լաս Փալմաս Օսասուն - Ռէալ Մարալիոնա Ռէալ Պեթիս - Ռէալ Վալյադոլիտ Վալենսիա - Արիթիքո Պիլպո

ՊԱՍՔԵԹՊՈՒԼ Գ.Մ.Մ.Ի ԱՂԶԿԱՆՑ ԿԱԶՄԸ ՅԱՂԹԵՅ ՊԼՈՒ ՍԹԱՐԶԻ

Լիբանանի պասքեթբոլի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան 17րդ հանգրուանին իր կատարած մրցումին, երէկ Հ.Մ.Մ.Ի ներկայացուցչական կազմը 48 - 43 արդիւնքով պարտութեան մատնեց Պլու Սթարզը, Մարգական Աւանի դաշտին մէջ: Ա. կիսախաղին Հ.Մ.Մ.Ի աղջիկները թէեւ 27 - 22 արդիւնքով պարտուած էին, սակայն Բ. կիսախաղին անոնք յաջողեցան չըջել մրցումին արդիւնքը եւ արձանագրել եղանակի իրենց 9րդ յաղթանակը: Մէնտի Սիմոնեան նշանակեց 22 կէտ:

18րդ հանգրուանին Հ.Մ.Մ. կը մրցի Սաթէս Մար Տուսէթի դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ Ուրբաթ, 1 Փետրուարին, Ֆուսա Շեհապի դաշտին վրայ (Ժուճիէ), ժամը 19:00ին:

Ստորեւ՝ դասակարգը.	ՄԸՅ.	Յ.	Պ.	ԿԵՏ
1.- Սաթէս	17	16	1	49
2.- Անթաքի	17	12	5	41
3.- Սատաքա	17	11	6	39
4.- Հ.Մ.Մ.	17	9	8	35
4.- Է.Ս. Պէ.	17	3	14	23
6.- Պլու Սթարզ	17	0	17	17

●ԼԻԲԱՆԱՆԻ պասքեթբոլի Բ. դասակարգի տղոց ախոյեանութեան 22րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Մ.Ի տղոց ներկայացուցչական կազմը կը կատարէ իր վերջին մրցումը, Հ.Մ.Մ.Ի «Թիմուկեան» մարզադաշտին վրայ, հերթնակալով Ռիատի Ղազիրը: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 21:00ին:

Հ.Մ.Մ. այժմ կը գրաւէ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը, երկու կէտով գերազանցելով Ռիատի Ղազիրը:

Ստորեւ՝ առաջին հինգին դասակարգը.	ՄԸՅ.	Յ.	Պ.	ԿԵՏ
1.- Հ.Մ.Մ.	21	17	4	55
2.- Ռիատի	21	15	6	53
3.- Ահիսա Ռիատա	21	14	7	49
4.- Աճուպիմ Պարթէ	21	13	8	47
5.- Ֆիտաա Սալաա	21	12	9	45

ԼԵՎԱՍ

ՀԵԾԵԼԱՐՇԱԻՒ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Անցեալ Կիրակի օր, «Մարինա»ի մերձակալ շրջանին մէջ (Տրապալա) տեղի ունեցան Հ.Մ.Մ.Ի ԼԵՎԱՍԻ հեծելաբաշտի մրցումները, որոնք տուին հետեւեալ արդիւնքները.

- ՓՈՔՐ ԱՂԶԻԿԵՐ
 - 1.- Սիլվա Գուլուսմեան՝ Թոնչոնգ Բոյն
 - 2.- Նաթայի Պետրոսեան՝ Ս. Բառասնից Մանկանց
 - 3.- Գարլա Մկրտիչեան՝ Գ. Կիւլպէնկեան - Յառաջ
 - 4.- Սարին Դաւիթեան՝ Մեսրոպեան
 - 5.- Թալին Մանուկեան՝ Ս. Հոփսիսմեանց

- ՓՈՔՐ ՏՂԱԸ
 - 1.- Յարութ Մկրտիչեան՝ Թոնչոնգ Բոյն
 - 2.- Բաֆֆի Քիւսպէքեան՝ Գ. Կիւլպէնկեան - Յառաջ
 - 3.- Ռազմիկ Շիրինեան՝ Ս. Բառասնից Մանկանց
 - 4.- Դաւիթ Պաղտասարեան՝ Ս. Բառասնից Մանկանց
 - 5.- Վարդան Երէցեան՝ ձեւարան

- ՄԻՋԱԿ ՏՂԱԸ
 - 1.- Շիրապ Բենտիթեան՝ Գ. Կիւլպէնկեան - Յառաջ
 - 2.- Ոսկան Վարդիվառեան՝ Ս. Բառասնից Մանկանց
 - 3.- Ժիրայր Կիւլիլիւսեան՝ Ս. Հոփսիսմեանց
 - 4.- Օշին Մանուկեան՝ Ս. Հոփսիսմեանց
 - 5.- Ալէն Մելիքեթեան՝ Թոնչոնգ Բոյն

- ՄԻՋԱԿ ԱՂԶԻԿԵՐ
 - 1.- Ռաքէլ Բենտիթեան՝ Գ. Կիւ

